



Պաշտօնաթերթ ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԻՍ 12, 2026

Ժ. Տարի, թիւ 28 (483) (Նոր Շրջան), Հիմնում 1899-ին, իբրեւ «Զայն Հայրենեաց»

ՓՈՔԻ ԵՐԿՐԻ ՄԵԾ ՄԻՐՏԸ.

Հայաստան՝ Լիբանանի դժուար օրերուն

Լիբանանի Բարձրագոյն Օգնութեան Յանձնաժողովը, 8 յուլիս 2026-ին, Պէյրութի նաահանգիստին մէջ, Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարի տեղակալ Վահան Կոստանեանի, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սարմէն Բաղդասարեանի, լիբանանահայ պետական երեսփոխանուհի Փոյա Եագուպեանի, երեսփոխաններ Յակոբ Թերզեանի եւ Յակոբ Բագրատունիի, Բարձրագոյն Օգնութեան Յանձնաժողովի ընդհանուր քարտուղար, բրիգատի զօրավար Պասսամ Նապուլսի, ինչպէս նաեւ Պէյրութի նաահանգիստի տնօրէններու խորհուրդի նախագահ եւ ընդհանուր տնօրէն Մարուան Նաֆիի ներկայութեամբ, պաշտօնապէս ընդունեց Հայաստանի Հանրապետութեան կողմէ Լիբանանին մոտարարութեամբ մարդասիրական օգնութիւնը:



Մօտ 80 թոն ընդհանուր կշիռ ունեցող հինգ բեռնարկղերէ բաղկացած այս օգնութիւնը կը ներառէր դեղորայք, սննդամթերք եւ բժշկական պարագաներ:

Լիբանանի եւ Հայաստանի Հանրապետութիւններու պետական օրհներգերու ինչումէն ետք, Բարձրագոյն Օգնութեան Յանձնաժողովի ընդհանուր քարտուղար Պասսամ Նապուլսի ջերմօրէն ողջունեց հայկական պատուիրակութիւնը՝ ընդգծելով, որ այս այցելութիւնը կը խորհրդանշէ երկու բարեկամ ժողովուրդներու եւ պետութիւններու միջեւ գոյութիւն ունեցող ամուր գործակցութիւնը, փոխադարձ յարգանքն ու դարաւոր պատմական կապերը:

«Մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք Հայաստանի կառավարութեան եւ ժողովուրդին՝ Լիբանանին ցուցաբերած այս մարդասիրական աջակցութեան համար: Ան ազնիւ եւ եղբայրական նախաձեռնութիւն մըն է, որ կ'արտացոլացնէ մեր երկու ժողովուրդները միացնող պատմական յարաբերութիւնները եւ կը վերահաստատէ Հայաստանի զօրակցութիւնը Լիբանանին այս դժուարին օրերուն»,– ըսաւ ան:

Պասսամ Նապուլսին նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Սարմէն Բաղդասարեանին՝ երկկողմ յարաբերութիւններու ամրապնդման ուղղութեամբ անոր շարունակական ջանքերուն եւ այս մարդասիրական նախաձեռնութեան յաջող իրականացման մէջ ունեցած կարեւոր ներդրումին համար: Իր խօսքի աւարտին ան յոյս յայտնեց, որ երկու երկիրներուն միջեւ համագործակցութիւնը պիտի շարունակէ աւելի խորանալ՝ ի շահ երկու բարեկամ ժողովուրդներուն:

Իր կարգին, Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարի տեղակալ Վահան Կոստանեան վերահաստատեց Հայաստանի կառավարութեան եւ ժողովուրդին անսասան յանձնառութիւնը՝ մշտապէս կանգնելու Լիբանանի պետութեան եւ լիբանանցի ժողովուրդին կողքին:

«Հայ եւ լիբանանցի ժողովուրդները դարեր շարունակ միացած են պատմական խոր արմատներով: Մենք միասին անցած ենք պատմութեան ծանրագոյն փորձութիւններուն ընդմէջէն, միասին բաժնած ենք թէ՛ ցաւը, թէ՛ ուրախութիւնը: Այսօր Լիբանանի կողքին կանգնիլը մեզի համար բարոյական պարտաւորութիւն է, եւ Հայաստանի Հանրապետութիւնը լիովին հաւատարիմ է այդ պարտաւորութեան»,– նշեց ան:

Ընդգծելով կարեւորութիւնը այն մարդասիրական օժանդակութեան, Լիբանանի էջ ՀՀ դեսպան Սարմէն Բաղդասարեան կ'եզրակացնէ. «Իր ողջ կարողութիւններու սահմաններու ծիրէն ներս, Հայաստանի Հանրապետութիւնը միշտ եղած է եւ կը շարունակէ մնալ Լիբանանի բարեկամ ժողովուրդի կողքին: Ես պիտի բնութագրեի, որպէս եղբայրական ժողովուրդ, քանի որ մեր երկու ազգերը պատմութեան ընթացքին կիսած են զարմանալիօրէն նմանատիպ փորձութիւններ, տառապանքներ եւ դիմադրողականութիւն:

Մահմանափակ նիւթական հնարաւորութիւններ ունենալով հանդերձ՝ Հայաստան ոչ միայն երբեք չտատանեցաւ, այլեւ ժամանակին մարդասիրական աջակցութիւն ցուցաբերեց Լիբանանին՝ վերահաստատելով, որ մարդասիրութիւնը կը չափուի ոչ թէ կարողութիւններու, այլ կամքի ու համերաշխութեան ուժով:

ՊԱՅԾԻԿ ԳԱԼԱՅՈՒՄԱՆ

«ԱՅԵՐԻՒՄ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

«Պայքար»-ի աշխատակիցներուն եւ ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք, որ շաբաթաթերթը լոյս պիտի չտեսնէ Յուլիս 19 եւ 26 թուականներուն տարեկան արձակուրդի պատճառով: Մեր լաւագիւլ թիւը լոյս պիտի ընծայենք Օգոստոս 2-ին: Յանգի արձակուրդը կը մաղթենք «Պայքար»-ի մեծ ընտանիքի անդամներուն:

Խմբ.

ԱՅՍ ԹԻՒՆԿ ԿԱՐԴԱԼ՝

ՎԵՐԱԳՏԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԾԱՐԸ	Էջ 2
ՃԵՂՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԻՆՔԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ...	Էջ 3
Լիբանան-Իսրայէլ համաձայնագիրը.	Էջ 4
«ԿԱՐԻՓ» ԹՈՒՐԸ ԳՐԱԿԱՆ ԸՆԹՈՒՄԸ	Էջ 5
ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆԸԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	Էջ 6
ՏՐՏՄԱԹԱՍԻՑ ԳՈՅՆԵՐԻ ԶԵԱՐԵՐՈՒՄ	Էջ 7
ԹՐԱՅ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՒՄԱՍԵԱՆ	Էջ 8
Երկաթէ Դճալը	Էջ 10
ՊԱՏԻ ԱՐԺԱՆԱՐԱՅ	Էջ 12

ԵՐԿՐԻ ԱՄԻՍՈՎ ԿԱԼԱՆԱԴՈՐՈՒԱԾ Է ԲԿՅ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԸ

Հայաստանի իրաւապահները ձերբակալած են գործարար Գագիկ Ծառուկեանը խուզարկելէ ետք անոր պատկանող ձեռնարկութիւնները:

Յուլիս 6-ին վաղ առաւօտէն իրաւապահները խուզարկած են «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանի տունը, անոր պատկանող գրեթէ բոլոր ձեռնարկութիւններուն մէջ, լրագրողներու հետ զրոյցին յայտնած է ԲՀԿ խօսնակ Իվետա Տօնոյեան:



«Մէկ տասնեակից աւելի ձեռնարկութիւնների մասին է խօսքը, այդ թւում «Արարատ-ցեմենտ» գործարանում, Երեւանի քոնեակի-գինու-օղու գործարանում եւ այլն»,– ըսած է Տօնոյեան:

Յունիս 25-ին Գլխաւոր դատախազութիւնը «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ

Ծառուկեանը անձեռնմխելիութենէն զրկելու եւ անոր նկատմամբ քրեական հետապնդում յարուցելու համաձայնութիւն ստանալու միջնորդութիւն ներկայացուցած էր Կեղդունական Ընտրական Յանձնաժողով:

Դատարանը բաւարարած է դատախազութեան դիմումը ու Ծառուկեան կալանաւորուած է երկու ամիսով:

ԵՐՈՍԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ Է ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՈՒՈՂ ԱԿԱՆԱՋԵՐԾՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Երոսիութեան աջակցութեամբ Հայաստան ներկրուած է հեռակառավարող ականագերծման յատուկ երկու մեքենայ, որոնք պիտի կիրառուին երկրի վտանգաւոր վայրերուն մէջ մարդասիրական ականագերծման աշխատանքներու համար:

Խրուաքական արտադրութեան այս տեխնիկական նախատեսումը է բոլոր տիպի ականներու համար եւ ունակ է դիմաւորել հզօր պայքրումներու:

Պաշտօնական գնահատմամբ՝ Հայաստանի հինգ մարզերու մէջ՝ Տաւուշի, Սիւնիքի, Վայոց ձորի, Արարատի եւ Գեղարքունիքի մէջ, առկայ է շուրջ 43 միլիոն քառակուսի մէթր «աղտոտուած տարածք», այսինքն՝ վտանգաւոր հատուածներ: Անոնք հիմնականին մէջ գիւղատնտեսական հողեր, արօտավայրեր ու ենթակառուցուածքներ են: Ըստ կառավարութեան՝ նոր սարքաւորումներուն կիրառումը պիտի նպաստէ վտանգներու էական նուազեցման եւ տարածքներու ընկերա-տնտեսական զարգացման:

Այս յատկացումը կ'իրականացուի 2025 թուականի Դեկտեմբերին Հայաստանի եւ Երոսիութեան միջեւ ստորագրուած երկկողմ գործընկերութեան օրակարգի փաստաթուղթի շրջանակին մէջ, որով նախատեսուած է 15 միլիոն եւրօ յատկացնել խաղաղութեան պահպանման ու աւելի դիմացկուն Հայաստանի համար: Բացի ականագերծման մեքենաներէն, Հայաստանը շուտով պիտի ստանայ նաեւ անհրաժեշտ յագեցուածութեամբ շտապօգնութեան երկու մեքենայ:

Հեռակառավարող մեքենաները գործի պիտի դրուին 2027-էն եւ պիտի օգտագործուին նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման աշխատանքներուն մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԴԵՍՊԱՆ ՆՇԱՆԱԿԱԾ Է ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԵՋ

Հայաստան իր նորանկախ պատմութեան մէջ առաջին անգամ Փաքիստանի մէջ դեսպան պիտի ունենայ:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանի հրամանագրով Կարէն Գրիգորեանը, համատեղութեան կարգով, նշանակուած է Փաքիստանի մէջ ՀՀ դեսպան:

Հայաստանն ու Փաքիստանը դիւանագիտական յարաբերութիւններ հաստատած են 2025-ի Օգոստոսին՝ համատեղ շրջաբերականի ստորագրմամբ: Մինչ այդ Փաքիստանը չէր ճանչնար Հայաստանի Հանրապետութիւնը եւ չունէր դիւանագիտական յարաբերութիւններ Երեւանի հետ: Փաքիստանի այս դիրքորոշման հիմնական պատճառը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ երկարամեայ հակամարտութիւնն է Լեռնային Ղարաբաղի շուրջ:



ՎԵՐԱԳՏՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՄԱՐԱԾԵԽՈՒԹԵԼՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Մենք պատահաբար չենք միմեանց ընտրում: Մենք հանդիպում ենք միայն նրանց, ովքեր արդեն ապրում են մեր ենթագիտակցության մէջ:

Զիզմունդ Ֆրեյդ

Վերջերս՝ աշխարհում եւ մեր երկրում տեղի ունեցող իրադարձութիւնների հետ կապուած, աւելի յաճախ եմ մտորում աշխարհիս կառուցուածքի, մարդ տեսակի հոգու եւ նման այլ թեմաներ շուրջ: Միշտ զարմանում եմ, որ անչափ կարճատեւ կեանք-ժամանակում նրանք հասցնում են նաեւ ստորութիւններ անել: Մարդը միակ արարածն է, որ կարող է ամենադաժան հարուածը հասցընել՝ դէմքին ունենալով հրէշտակային ժայիտ: Պատմութեան ամենասարսափելի ողբերգութիւնները, պատերազմներն ու դաւաճանութիւնները յաճախ իրագործուել են յանուն ինչ-որ «բարձրագոյն նպատակի», յանուն «սիրոյ» կամ «արդարութեան»: Մենք վախենում ենք մեր սեփական «բացթողումներից», մեր բնագոյներից ու ներքին անկատարութիւնից, ուստի շտապում ենք դրանք սայիտակ սաւանով ծածկել: Բայց այդ կեղծ արքութիւնն աւելի շատ կեանքեր է խեղել, քան բացայայտ չարութիւնը, որովհետեւ բացայայտ թշնամուց գիտես, մօտաւորապէս ինչ սպասել ու ինչպէս պաշտպանուել: Իսկ այն դժոխքից, որն իրեն դրախտ է անուանում, փրկութիւն չկայ: Խնդիրն այն է, որ մեր ներսում կայ եւ՝ աստուածային էութիւնը, եւ՝ դահիճը, բայց մենք հրաժարուում ենք ընդունել երկրորդին: Իսկ երբ մարդը կուրօրէն հաւատում է իր բացարձակ բարութեանը, նա դառնում է ամենա-վտանգաւորը: Նա դադարում է հարցականի տակ դնել իր արարքները, արդարացնում է իր ցանկացած եսասիրական կամ ազդեանի քայլ: Կարծում եմ, որ բարի լինելը բնատրութեան գիծ չէ կամ ի վերուստ տրուած շնորհ: Այն ամենօրեայ, գիտակցուած ու շատ բարդ ընտրութիւն է, երբ նայում ես ներսիդ անդունդին, տեսնում ես քո անձնական անկատար աշխարհը ու դրանից յետոյ որոշում ես չվնասել, օգնել, սիրել, ուրեմն հէնց սա է իրական արժէքը: Եւ սա կեղծիք չէ, այլ բացարձակ յաղթանակ քո իսկ մութ կողմի նկատմամբ, քանզի. «Մարդկային հոգին աւելի խորն է, քան նոյնիսկ դժոխքը, որովհետեւ դժոխքը ձեւացնում է, թէ բարի է»:

Այս պարագայում կարելու է հասկանալ, թէ ինչպէս է մարդու մտադրութիւնը նիւթականանում: Հոգեբանները պնդում են, որ մեր մարմնի շուրջ գոյութիւն ունի անտեսանելի էներգետիկ դաշտ: Երբ մենք արձագանգում ենք որեւէ մարդու կամ իրավիճակի, այդ անտեսանելի դաշտից էներգիա ենք վերցնում: Այդ պահին մեր մէջ աւելի շատ նիւթականութիւն է լինում եւ աւելի քիչ՝ էներգիա: Մարդկանց մեծամասնութիւնը, գտնուելով այդ վիճակում, փորձում է նիւթական միջոցներով փոխել աշխարհը: Մենք ձգտում ենք, ստիպում ենք, որ ցանկալի արդիւնքը տեղի ունենայ, փորձում ենք վերահսկել եւ կանխատեսել այն: Այդ պատճառով մարդիկ յաճախ դառնում են մրցակցային, կախաւած, խաբւում են, նոյնիսկ գողանում (ընտրութիւնների գործընթացը վկայ), քանի որ կարծում են, թէ դա է իրենց ուզածին հասնելու միակ ճանապարհը: Սակայն երբ մարդն իսկապէս գտնում է ներկայ պահի մէջ գիտակցում, նա բացում է իր սիրտը եւ կարողանում է պահպանել բարձր ու վեհ զգացողութիւններ, նրա մարմնի շուրջ գտնուող մագնիսական դաշտը սկսում է ընդարձակուել: Այդ ժամանակ նրա մէջ աւելի շատ էներգիա է լինում, քան նիւթ եւ կարող է աւելի մեծ ազդեցութիւն ունենալ իր իրականութեան վրայ: Պատկերաւոր դա այս տեսքն ունի՝ երբ բացում ենք մեր սիրտը, դա նման է ջրի մէջ քար նետելուն: Առաջանում են ալիքներ: Որքան մեծ է քարը, այնքան մեծ են ալիքները: Եթէ կարողանում ենք երկար ժամանակ պահպանել այդ վիճակը, ապա կարծես նոյն քարը կրկին ու կրկին ենք նետում ջրի մէջ՝ շարունակաբար փոխանցելով մեր ազդանշանը տիեզերական դաշտին: Այդպէս էլ զգացմունքները հօգու մագնիսական լիքը են, իսկ մեր մտադրութիւնը եւ միտքը այն կարելու տեղեկատուութիւնն են, որը կրում է այդ ալիքը: Երբ յստակ մտադրութիւնը միատրուում է բարձր եւ վեհ զգացմունքների հետ, մենք սկսում ենք ազդեցութիւն գործել նիւթական աշխարհի վրայ: Մենք նիւթականացնում ենք մեր միտքը մեծ էներգետիկ դաշտի կարողութեան հաշուին: Այն, թէ ինչպէս ենք մտածում եւ ինչպէս ենք զգում, ստեղծում է էլեկտրամագնիսական ազդանշան, որն միտքն ուղարկում է դէպի արտաքին աշխարհ, իսկ զգացմունքը իրադարձութիւններ է ձգում դէպի մեզ: Ցաւօք՝

Մարդկանց մեծամասնութիւնը դեռեւս չի գիտակցում այս գործընթացը եւ յագորդ է տալիս նիւթապաշտութեան մոլուցքին...

Այս մեկնակէտից էլ դիտարկենք հայ իրականութեան ցատտ խաչներուկը: Որպէս ելակէտ նկատենք, որ «Չի կարելի վերադառնալ անցեալ եւ փոխել մեկնարկը, բայց կարելի է մեկնարկել հիմա եւ փոխել աւարտը»: Յայտնի է, որ սահմանափակ մարդիկ սովորաբար դատապարտում են այն ամէնը, ինչ դուրս է նրանց մտահորիզոնի սահմաններից: Առաջին հայեացքից այս մտքերը տարբեր թեմաների մասին են, սակայն իրականում դրանք նկարագրում են այսօրուայ հայկական հասարակութեան ամենախտրոքային խնդիրներից երկուսը՝ անցեալի գերիշխանութիւնն ապագայի նկատմամբ եւ անհանդուրժողականութիւնը տարբեր կարծիքների հանդէպ:

Հայաստանը վերջին տարիներին ապրում է պատմական ծանր ցնցումների շրջան: Պատերազմ, տարածքային կորուստներ, անվտանգային անորոշութիւն, արտագաղթ, սոցիալական եւ քաղաքական անվստահութիւն: Այս ամէնը հասարակութեան մէջ ստեղծել է հոգեբանական մի վիճակ, երբ մարդիկ աւելի յաճախ ապրում են ոչ թէ վաղուայ, այլ երէկուայ ցաւերով: Սակայն որեւէ ժողովուրդ չի կարող կառուցել իր ապագան, եթէ մշտապէս բնակւում է իր անցեալի ներսում: Անցեալը պէտք է յիշել, ուսումնասիրել եւ գնահատել, բայց այն չի կարող դառնալ ներկայի բանտը: Այսօր Հայաստանի ամենամեծ մարտահրաւերը ոչ միայն արտաքին վտանգներն են, այլ նաեւ ներքին անկարողութիւնը՝ նոր մեկնարկ տալու սեփական մտածողութեանը: Հասարակութեան տարբեր հատուածներ շարունակում են միմեանց բաժանել «նախկինների» եւ «ներկաների», «հայրենասէրների» եւ «դաւաճանների», «արեւմտամէտների» եւ «ռուսամէտների»: Յաճախ ոչ թէ գաղափարներն են քննարկւում, այլ մարդկանց պիտակատրումն ու միմեանց արժեզրկումը: Վերլուծաբանները յաճախ են մատնանշում Հայաստանում հասարակական բեւեռացման եւ հանրային վատահոլութեան անկման խնդիրը: Այ այստեղ է, որ երկրորդ միտքը դառնում է առանձնապէս արդիական: Սահմանափակ մտածողութիւնը միշտ վախենում է նոր գաղափարից: Այն, ինչ չի տեղաւորուում սեփական պատկերացումների շրջանակում, անմիջապէս մերժում է: Մարդը դադարում է լսել եւ սկսում է դատել: Իսկ երբ հասարակութիւնը կորցնում է լսելու կարողութիւնը, սկսում է կորցնել նաեւ զարգանալու կարողութիւնը:

Այսօր հայ իրականութեան մէջ յաճախ կարելի է տեսնել, թէ ինչպէս են մարդիկ ոչ թէ փորձում հասկանալ դիմացինի կարծիքը, այլ ձգտում են ոչնչացնել այն: Քննարկումների մեծ մասը վերածում է փոխադարձ վիրատրանքների, իսկ փաստարկները զիջում են զգացմունքային պոռթկումներին: Սակայն ցանկացած ճգնաժամ իր մէջ նաեւ հնարաւորութիւն է պարունակում: Հայաստանը բազմիցս ապացուցել է, որ կարող է վերածնունդ ամենաժամը իրավիճակներից յետոյ: Դրա համար անհրաժեշտ է հրաժարուել երկու ծայրայեղու-

թիւններից՝ անցեալը իդէալականացնելուց եւ ներկան ամբողջութեամբ մերժելուց: Ոչ մի իշխանութիւն յաւերժ չէ, ոչ մի քաղաքական ուժ չի մարմնաւորում ամբողջ ճշմարտութիւնը, եւ ոչ մի սերունդ չի կարող միայնակ լուծել երկրի բոլոր խնդիրները:



Մեզ անհրաժեշտ է ոչ թէ հերթական փոխադարձ մեղադրանքներ, այլ ազգային հասունութիւն: Հասունութիւն՝ ընդունելու սեփական սխալները, լսելու ուրիշներին, տարբեր կարծիքները դիտարկելու որպէս զարգացման հնարաւորութիւն, ոչ թէ սպառնալիք: Հասունութիւն՝ հասկանալու, որ հայրենիքի հանդէպ սէրը կարող է ունենալ տարբեր արտայայտութիւններ, իսկ ճշմարտութիւնը յաճախ գտնում է ոչ թէ ծայրայեղութիւնների, այլ երկխօսութեան մէջ: Հայաստանի ապագան որոշուելու է ոչ միայն քաղաքական որոշումներով, այլեւ հասարակութեան մտածողութեամբ: Եթէ շարունակենք ապրել միայն կորցրածի յիշողութեամբ, կը կորցնենք նաեւ ստեղծելու կարողութիւնը: Իսկ եթէ կարողանանք նոր մեկնարկ տալ մեր հանրային մտածողութեանը, յարգել բազմակարծութիւնը եւ դուրս գալ մեղ մտահորիզոնների սահմաններից, ապա կը փոխենք ոչ միայն աւարտը, այլեւ ամբողջ պատմութեան ընթացքը: Որովհետեւ ժողովուրդների կեանքում նոյնպէս գալիս են պահեր, երբ ամենակարելու հարցը դառնում է ոչ թէ այն, թէ ինչ ենք կորցրել, այլ այն, թէ ինչ ենք պատրաստ կառուցել այսօրուանից սկսած:

Այսօր մենք կանգնած ենք ոչ միայն քաղաքական, տնտեսական եւ անվտանգային մարտահրաւերների, այլեւ արժէքային ընտրութեան առջեւ: Մեր հասարակութեան ապագան կախուած է նրանից, թէ արդեօք կը կարողանանք յաղթահարել անցեալի վիրատրանքների, փոխադարձ անհանդուրժողականութեան եւ բաժանարար գծերի գերիշխանութիւնը: Ազգերը մեծանում են ոչ թէ այն ժամանակ, երբ բոլորը նոյն կերպ են մտածում, այլ այն ժամանակ, երբ տարբեր մտածող մարդիկ կարողանում են միատրուել յանուն ընդհանուր նպատակի: Հայաստանի համար այսօր ամենակարելու խնդիրը ոչ թէ մեղաւորներ փնտռելն է, այլ պատասխանատուներ դառնալը: Պատասխանատու՝ մեր խօսքի, մեր վերաբերմունքի, մեր ընտրութիւնների եւ մեր երկրի ապագայի համար: Որքան էլ ծանր լինեն մեր ապրած կորուստները, դրանք չեն կարող դառնալ անգործութեան կամ յուսահատութեան արդարացում: Պատմութիւնը մեզ տուել է բազմաթիւ դասեր, սակայն այդ դասերը արժէք կ'ունենան միայն այն դէպքում, եթէ վերածնունդ իմաստութեան եւ գործի: Ապագան չի ծնունդ ինքնաբերաբար: Այն կառուցում է ամենօրեայ աշխատանքով, լայնախոհութեամբ, գիտելիքով եւ փոխադարձ յարգանքով: Եթէ կարողանանք դուրս գալ մեղ կուսակցական եւ խմբային շահերի շրջանակներից եւ վերագտնել ազգային համերաշխութեան գաղափարը, ապա կը կարողանանք ոչ միայն յաղթահարել ներկայի դժուարութիւնները, այլեւ ստեղծել աւելի ուժեղ, արդար եւ կենսունակ Հայաստան:

Ի վերջոյ, իւրաքանչիւր սերունդ ստանում է իր պատմական հնարաւորութիւնը: Մերը, թերեւս, այն է, որ կարողանանք ցաւից ծնունդ տալ իմաստութեանը, տարածայնութիւններից՝ երկխօսութեանը, իսկ հիասթափութիւնից՝ նոր յոյսի: Եւ գուցէ տարիներ անց մեր զաւակներն ու թոռները այս ժամանակաշրջանին նայեն ոչ թէ որպէս կորուստների ու բաժանումների դարաշրջանի, այլ որպէս այն շրջադարձային պահի, երբ հայ ժողովուրդը կարողացաւ յաղթահարել իր ներքին պատմէշները եւ նոր ուժով սկսել իր պատմութեան յաջորդ էջը:

07.07.2026, Երեւան

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշալիր ԿԵՏՆՃԵԱՆ (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ ԱՆՏԻՔԵԱՆ	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուօ)
Զաւէն Գրիգորեան	(Լթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԻՆՔՆԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԱՐԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

28 յունիս 2026-ին, Իսրայելի կառավարությունը միաձայնությամբ ընդունեց Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու մասին որոշումը: Թէև այդ որոշումը դեռևս ենթակա է Իսրայելի խորհրդարանի՝ Բնեսեթի վաերացման, որպեսզի դառնայ պետության վերջնական պաշտոնական դիրքորոշումը, որ արդեն իսկ նշանակալի հանգրուան մը կը համարուի Իսրայելի պետական քաղաքականության մէջ՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի համատեքստին մէջ:



Պատմագիտական տեսանկիւնէն այս որոշումը կը դիտարկուի ոչ միայն որպէս 1915–1923 թուականներուն Օսմանեան կայսրութեան մէջ հայ ժողովուրդին դէմ իրականացուած ցեղասպանութեան պատմական փաստի պետական ընդունման հերթական դրսեւորում, այլև որպէս պատմական յիշողութեան, իրաւական պատասխանատւութեան եւ միջազգային քաղաքականութեան փոխազդեցութեան արտայայտութիւն: Միաժամանակ, որոշման ընդունման ժամանակագրութիւնը եւ ներկայ աշխարհաքաղաքական միջավայրը պատճառ դարձան, որ այն լայնօրէն մեկնաբանուի նաեւ Իսրայել-Թուրքիա յարաբերութիւններուն մէջ խորացող հակասութիւններու եւ Անքարային ուղղուած քաղաքական ուղերձի ծիրէն ներս:

Այսպիսով, որոշումը, որ երկար տարիներ քաղաքական եւ դիւանագիտական նկատառումներէ դուրսուած յետաձգուած էր, Իսրայելի պետական քաղաքականութեան մէջ նշանակալից շրջադարձ կը նկատուի: Ան կը միատրե պատմական արդարութեան ճանաչման, ցեղասպանութիւններու յիշողութեան պահպանման եւ ժամանակակից միջազգային յարաբերութիւններու քաղաքական տրամաբանութիւնը՝ սպասելով Բնեսեթի վաերացման, որպէսզի ստանայ Իսրայելի պետութեան վերջնական պաշտոնական դիրքորոշման իրաւական ուժը:



Իսրայելի արտաքին գործոց նախարար Գիդէոն Սաար, ներկայացնելով նախաձեռնութիւնը, յայտարարեց, թէ «երբեք ուշ չէ ճիշդը ընելու»՝ շեշտելով, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ոչ միայն պատմական ճշմարտութեան վերահաստատում է, այլև բարոյական պարտաւորութիւն՝ ընդդէմ պատմութեան ժխտման եւ խեղաթիւրման: Ան ընդգծեց, որ բազմաթիւ պատմական փաստաթուղթեր եւ միջազգային գիտական ուսումնասիրութիւններ անվիճելիօրէն կը հաստատեն հայ ժողովուրդին դէմ իրականացուած ցեղասպանութիւնը, եւ որ պետութիւն մը, որ իր ինքնութիւնը կառուցած է պատմական յիշողութեան եւ մարդկային արժանապատուութեան վրայ, չի կրնար անտարբեր մնալ այդ ճշմարտութեան հանդէպ: «Պատմական որոշում. Իսրայելի կառավարութիւնը միաձայն հաստատած է արտագործնախարար Գիդէոն Սաարի առաջարկը՝ ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը», - յայտարարած է Արտաքին գործերու նախարարութիւնը: Սակայն հայ ժողովուրդը երբեք չի մոռնար Արցախի պատերազմի օրերուն Ատրպէյճանի հետ Իսրայելի մեղսակցութիւնը՝ յատկապէս Արցախի ցեղասպանական հայաթափման մէջ: Իսրայելի յաջողակական կառավարութիւնները խուսափած են պաշտոնապէս ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը, մասամբ՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւնները պահպանելու համար, որ նախապէս տարածաշրջանին մէջ Իսրայելի ամենամօտ ռազմավարական գործընկերներէն մէկն էր:

Քաղաքական վերլուծաբաններու մեծ մասը այս քայլը կը դիտարկէ ոչ միայն որպէս պատմական արդարութեան ուղղուած որոշում, այլ նաեւ որպէս Թուրքիոյ հասցէին յղուած յստակ քաղաքական պատգամ:

Հայ ժողովուրդին համար այս որոշումը ունի ոչ միայն քաղաքական, այլև խոր բարոյական եւ պատմական արժէք: Անկլա միջազգային այն գործըն-

թացին նոր հանգրուան մը կը հանդիսանայ, որ ուղղուած է Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչման, պատմական արդարութեան վերահաստատման եւ ցեղասպանութիւններու ժխտման դէմ պայքարին: Միեւնոյն ժամանակ, այս քայլը կը յիշեցնէ, որ պատմական ճշմարտութիւնը, որքան ալ ուշացած ըլլայ անոր ընդունումը, ի վերջոյ կը շարունակէ իր ճանապարհը դէպի միջազգային արդարութիւն:

Սակայն Կազայի մէջ պատերազմը սկսելէն ի վեր Թուրքիան պարբերաբար կը մեղադրէ Իսրայելը պաղեստինեան տարածքին մէջ ցեղասպանութիւն իրականացնելու պատճառով: Բան մը, որ ցայսօր Իսրայել կտրականապէս կը հերքէ: Թուրքիոյ նախագահ Էրտողան յանկարծ դարձած է պատերազմի ամենակոշտ քննադատներէն մէկը՝ բազմիցս համեմատելով իսրայէլցի առաջնորդները նացիստ պաշտօնեաներու հետ: Մինչ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանիահուն նոյնպէս հակադարձելով Էրտողանին կը յայտարարէ. - «հակասեմական բռնապետ, որ ցեղասպանութիւն կ'իրականացնէ քիւրտերու դէմ»:

Թուրքիա անցնելով յաջորդ քայլին, կը շարունակէ յայտարարել, թէ Իսրայելի կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչումը՝ պարզապէս սեփական յանցագործութիւնները թաքցնելու «քաղաքական» որոշում է: «Իսրայելի կառավարութիւնը, որ ամբողջ աշխարհի աչքին առջեւ համակարգուած կերպով հալածած է պաղեստինցի ժողովուրդը եւ կը դատուի Միջազգային դատարանի մէջ՝ Կազայի ժողովուրդին դէմ ցեղասպանութիւն կատարելու մեղադրանքով, կը փորձէ թաքցնել իր սեփական յանցագործութիւնները 1915 թուականի իրադարձութիւններու վերաբերեալ ընդունած քաղաքական որոշման միջոցով», - կ'ըսուի արտաքին գործերու նախարարութեան յայտարարութեան մէջ:

Նոյն հաղորդագրութեան մէջ Անքարան կը պնդէ, թէ Իսրայելի այս քայլը պատմական արդարութեան հետ կապ չունի, այլ կը ծառայէ բացառապէս քաղաքական նպատակներու: Թուրքիոյ իշխանութիւնները նաեւ յայտարարեցին, որ պիտի շարունակեն «վճռականօրէն աշխատիլ՝ վերջ տալու Իսրայելի տարածաշրջանային ծաւալապաշտական եւ ապակայունացնող քաղաքականութեան», վերահաստատելով իրենց կտրուկ դիրքորոշումը Թել Աւիի նկատմամբ:

Այս արձագանգը կը վկայէ, որ Իսրայելի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման որոշումը ոչ միայն պատմական եւ բարոյական նշանակութիւն ունի, այլև նոր լարուածութիւն կը ստեղծէ երկու երկիրներուն միջեւ արդեն իսկ խորացած քաղաքական ու դիւանագիտական ճգնաժամին մէջ:

Թուրքիան վերջին տարիներուն զգալիօրէն սահմանափակած է Իսրայելի հետ իր առեւտրական յարաբերութիւնները եւ միջազգային հարթակներու վրայ վերածուած է «Համաս»-ի ամենէն ազդեցիկ քաղաքական եւ դիւանագիտական պաշտպաններէն մէկը: Կազայի պատերազմէն ետք երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները հասած են աննախադէպ լարուածութեան, իսկ փոխադարձ մեղադրանքներն ու սուր հռետորաբանութիւնը աւելի խորացուցած են այդ ճգնաժամը:

Միեւնոյն ժամանակ, հայ ժողովուրդը տասնամեակներէ ի վեր կը շարունակէ իր պայքարը՝ միջազգային հանրութեան կողմէ 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան կողմէ հայերուն դէմ գործադրուած ցեղասպանութեան համընդհանուր եւ պաշտոնական ճանաչման համար, յանուն իր մէկուկէ միլիոն եւ աւելի նախահայրերուն, որոնք տեղահանուեցան, կոտորուեցան եւ զոհ գացին բռնազաղթի, սովին եւ համաճարակներուն՝ Օսմանեան իշխանութիւններուն կանխամտածուած քաղաքականութեան հետեւանքով:

Թուրքիան, ցայսօր կը շարունակէ մերժել «ցեղասպանութիւն» եզրոյթի կիրառումը՝ պնդելով, թէ Առաջին համաշխարհային պատերազմի քառսային պայմաններուն զոհ դարձած են թէ՛ հայեր եւ թէ՛ թուրքեր: Անքարան կը վիճարկէ նաեւ զոհերուն թիւը՝ զայն զնահատելով քանի մը հարիւր հազար, եւ կը մերժէ այն տեսակէտը, թէ տեղի ունեցածը նախապէս ծրագրուած բնաջնջման քաղաքականութիւն էր:

Հակառակ Թուրքիոյ ժխտողական դիրքորոշման, Հայոց ցեղասպանութիւնը մինչեւ այսօր պաշտօնապէս ճանչցուած է աշխարհի աւելի քան երեք տասնեակ պետութիւններու կողմէ: Այս ճանաչումները կը դիտուին ոչ միայն որպէս պատմական արդարութեան վերահաստատում, այլև որպէս ցեղասպանութիւններու կանխարգիլման եւ մարդկութեան դէմ գործուած ոճիրներու դատապարտման միջազգային յանձնառութեան արտայայտութիւն:

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիան այսօր պաշտօնական դիւանագիտական յարաբերութիւններ չունին: Երկու երկիրներուն միջեւ սահմանը երկար տարիներէ իվեր փակ մնացած է, սակայն Հայաստան-Թուրքիա իրար միացնող Մարկարայի կամուրջը բարեկարգման գործընթացի մէջ է: Հայաստան եւ Թուրքիա 2022 թուին Վիեննայի մէջ պայմանաւորուած էին բանալ հայթորքական ցամաքային սահմանը, որ փակ էր 1993 թուականէն իվեր: Ամիս մը առաջ, մարդասիրական նպատակներով, Մարկարայի կամուրջը օգտագործուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը բժշկական օժանդակութիւն առաքեց դէպի Լիբանան, օգնելու համար Լիբանանի հարաւէն տեղահանուած ժողովուրդին:

Արդարեւ, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ինքնին կը նշանակէ պատմական փաստերու ընդունում, որ հայ ժողովուրդին դէմ իրագործուած յանցագործութիւնները ցեղասպանութիւն են: Պատմագիտական իմաստով, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը առաջին հերթին պատմական ճշմարտութեան պաշտօնական ընդունումն է եւ միջազգային յիշողութեան հաստատման յոյժ կարեւոր քայլ:

Պէլլոյթ

ԼԻՔԱՆԱ-ԻՍՐԱՅԷԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ. ԽԱՊԱՊՈՒԹԵԱՆ ԴՈՒՌ, ԹԷ՛ ՆՈՐ ՓՈԹՈՐԻԿԻ ՆԱԽԵՐԳԱՆՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍԱԳՕ ԱՐԵՄՆ

Ուաշինկթոնի մէջ ստորագրուած Լիբանան-Իսրայէլ շրջանակային համաձայնագիրը նոր էջ մը կը բանայ Լիբանանի արդի քաղաքական ու ապահովական պատմութեան մէջ: Համաձայնագիրը, որ ստորագրուեցաւ անցնող 26 Յունիսին՝ Միացեալ Նահանգներու հովանաւորութեամբ, անմիջապէս դարձաւ լիբանանեան ներքին կեանքի ամենէն պայթուցիկ օրակարգերէն մէկը: Մէկ կողմէ Լիբանանի իշխանութիւնները զայն կը ներկայացնեն իբրեւ երկրի գերիշխանութեան վերականգնման առաջին քայլ, իսկ միւս կողմէ՝ Իրանի անմիջական նեցուկը վայելող «Հըզպալլա» զայն կ'որակէ «նուաստացում, ամօք եւ գերիշխանութենէ հրաժարում»:



Ստորագրման արարողութեան ներկայ էր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մարքո Ռուպիօ, ինչպէս նաեւ Ուաշինկթոնի մօտ Լիբանանի եւ Իսրայէլի դեսպանները: Ամերիկեան կողմը համաձայնագիրը ներկայացուց իբրեւ սկիզբ մը՝ շեշտելով, որ Լիբանանի ժողովուրդը իրաւունք ունի ապրելու ապահովութեան եւ խաղաղութեան պայմաններու մէջ: Սակայն նոյն պահուն Ռուպիոյի խօսքերուն մէջ զգալի էր նաեւ զգուշաւորութիւն մը. ասիկա վերջնական լուծում չէր, այլ երկար եւ բարդ գործընթացի մը սոսկ սկիզբը:

Համաձայնագրի էութեան մէջ դրուած է մէկ հիմնական հարց՝ Հարաւային Լիբանանի անվտանգային նոր դասաւորումը: Իսրայէլ կը պահանջէ, որ «Հըզպալլա» զինաթափուի ոչ միայն սահմանային գօտիներուն մէջ, այլ՝ ամբողջ Լիբանանի տարածքին: Իսրայէլի պաշտպանութեան նախարար Իսրայէլ Բաց յստակօրէն ըսաւ, որ իսրայէլեան ուժերու հեռացումը Լիբանանի հարաւէն պայմանաւորուած է «Հըզպալլա»-ի ամբողջական զինաթափումով: Աւելին՝ ան խօսեցաւ Լիբանանի մէջ իսրայէլեան բանակի «երկարատեւ ներկայութեան» պատրաստուելու մասին:

Այս կէտը եական է: Որովհետեւ եթէ համաձայնագիրը Լիբանանի համար կը ներկայացուի իբրեւ գերիշխանութեան վերականգնման ճանապարհ, ապա Իսրայէլի բացատրութեամբ ան նոյնքան ալ վերահսկողութեան եւ ապահովական երաշխիքներու համակարգ մըն է: Այսինքն՝ համաձայնագիրը կրնայ միաժամանակ կարողացուիլ երկու տարբեր ձեւերով. Լիբանանի իշխանութիւններու համար՝ պետութեան վերադարձ Հարաւ, Իսրայէլի համար՝ «Հըզպալլա»-ի դուրս մղում եւ սահմանային անվտանգութեան ամրապնդում:

Լիբանանի Հանրապետութեան նախագահ ժողգէ Լուիս համաձայնագիրը ներկայացուց իբրեւ առաջին քայլ մը՝ Լիբանանի պետութեան գերիշխանութիւնը ամբողջ հողատարածքին վրայ վերականգնելու առումով: Ան շեշտեց, որ Լիբանան կը ձգտի հանգրուանի մը, ուր չկայ գրաւում, չկան գերիներ, չկայ կախեալութիւն եւ չկայ «խնամակալութիւն»: Այս բառերը կարեւոր են, որովհետեւ անոնք կը փորձեն համաձայնագիրը զետեղել ոչ թէ զիջումի, այլ պետականութեան վերականգնման տրամաբանութեան մէջ:

Բայց «Հըզպալլա»-ի մօտեցումը այս բոլորին բոլորովին հակառակն է: Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Նայիմ Քասնմ համաձայնագիրը նկատեց հակասահմանադրական եւ հակաօրինական՝ յիշեցնելով, որ լիբանանեան օրէնքներով Իսրայէլ կը շարունակէ մըմալ թշնամի պետութիւն: Ըստ «Հըզպալլա»-ի, Լիբանան այս համաձայնագիրով «անվճար» զիջումներ կու տայ Իսրայէլին, օրինակաւորութիւն կու տայ գրաւման շարունակութեան եւ կը զրկէ լիբանանցիները իրենց հողերը վերադառնալու իրաւունքէն:



Աւելի վտանգաւորն այն է, որ «Հըզպալլա»-ի երեսփոխանները արդէն սկսած են խօսիլ քաղաքացիական պատերազմի վտանգին մասին: Լիբանանի Խորհրդարանին մէջ «Հըզպալլա»-ի «Հաւատարմութիւն Դիմաւորութեան» Պլոքի անդամ երեսփոխան Հասան Ֆատալլա յստակօրէն ըսաւ, որ այս համաձայնագիրը կարելի չէ պարտադրել, բացի եթէ իշխանութիւնները երթան ներքին բախումի մը: Այս խօսքը պատահական չէ: Լիբանանի մէջ զենքի հարցը միայն ռազմական հարց մը չէ, այլ՝ համայնքային, քաղաքական եւ գոյաբանական հարց: «Հըզպալլա»-ի զինաթափումը, թուրքի վրայ որքան ալ պարզ երեւի, զետնի վրայ կրնայ դառնալ ամբողջ երկրի ներքին հաւասարակշռութիւնը խախտող պայթուցիկ հանգոյց:

Ահա հոս է, որ պէտք է հարց տալ. ո՞վ պիտի իրականացնէ այս համաձայնագիրը: Լիբանանեան բանակը կրնա՞յ միայնակ ստանձնել այդ ծանր պարտականութիւնը: Իսրայէլ պիտի ընդունի՞ սպասել մինչեւ որ լիբանանեան պետութիւնը աստիճանաբար վերահսկողութիւն հաստատէ Հարաւի վրայ: Իսկ «Հըզպալլա» պիտի համակերպի՞ իր զինուորական դերակատարութեան կամ վերջաւորութեան: Այս հարցումներուն պատասխանները տակաւին կ'ընկնեն Ուաշինկթոնի մէջ ընթացող բանակցութեան շրջանակներէն: Սակայն Լիբանանի պատմութիւնը մեզի սորվեցուցած է, որ օտար ուժերու «ժամանակաւոր» ներկայութիւնները յաճախ կը դառնան երկարատեւ ազդեցութեան միջոցներ: Հարցը միայն այն չէ, թէ ամերիկեան զինուորականներ պիտի մտնե՞ն Հարաւային Լիբանան, թէ ոչ: Հարցը աւելի խոր է. Լիբանանի հարաւի անվտանգային ճարտարապետութիւնը ո՞վ պիտի գծէ: Պէյրո՞ւթը, Ուաշինկթը՞նը, Թէ՛ Աւի՞րը, թէ՛ բոլորը միասին՝ Լիբանանի ներքին կամքին վրայ ճնշում բանեցնելով:

նագիրը: Լիբանանեան բանակը կրնա՞յ միայնակ ստանձնել այդ ծանր պարտականութիւնը: Իսրայէլ պիտի ընդունի՞ սպասել մինչեւ որ լիբանանեան պետութիւնը աստիճանաբար վերահսկողութիւն հաստատէ Հարաւի վրայ: Իսկ «Հըզպալլա» պիտի համակերպի՞ իր զինուորական դերակատարութեան կամ վերջաւորութեան:

Այս հարցումներուն պատասխանները տակաւին յստակ չեն: Փոխարէնը յստակ է մէկ բան. Միացեալ Նահանգներ կը փորձէ աւելի տեսանելի եւ ուղիղ դեր ստանձնել Լիբանան-Իսրայէլ նոր դասաւորումներուն մէջ: Ամերիկեան մամուլի տեղեկութիւններով, Ուաշինկթոն կրնայ զինուորական անձնակազմով մասնակցիլ համաձայնագրի գործադրութեան վերահսկողութեան՝ թէ՛ Լիբանանի, թէ՛ Իսրայէլի մէջ: Այս մէկը կը ներկայացուի ոչ թէ իբրեւ մարտական ներկայութիւն, այլ՝ վերահսկողական եւ համակարգող առաքելութիւն:

Սակայն Լիբանանի պատմութիւնը մեզի սորվեցուցած է, որ օտար ուժերու «ժամանակաւոր» ներկայութիւնները յաճախ կը դառնան երկարատեւ ազդեցութեան միջոցներ: Հարցը միայն այն չէ, թէ ամերիկեան զինուորականներ պիտի մտնե՞ն Հարաւային Լիբանան, թէ ոչ: Հարցը աւելի խոր է. Լիբանանի հարաւի անվտանգային ճարտարապետութիւնը ո՞վ պիտի գծէ: Պէյրո՞ւթը, Ուաշինկթը՞նը, Թէ՛ Աւի՞րը, թէ՛ բոլորը միասին՝ Լիբանանի ներքին կամքին վրայ ճնշում բանեցնելով:

Այս համաձայնագրին առաջին հետեւանքը կրնայ ըլլալ լիբանանեան պետութեան դերի ուժեղացումը Հարաւի մէջ: Եթէ լիբանանեան բանակը կարողանայ տեղակայուիլ, վերահսկել գօտիները եւ կանխել նոր բախումները, ապա Լիբանան կրնայ երկար տարիներէ ետք առաջին անգամ ըլլալով վերականգնել իր որոշակի ներկայութիւնը սահմանային շրջաններուն մէջ: Այս մէկը ինքնին դրական զարգացում պիտի ըլլար:

Բայց վտանգները աւելի ծանր են: Առաջին վտանգը ներքին բախումն է: Եթէ համաձայնագիրը ընկալուի իբրեւ արտաքին պարտադրանք, «Հըզպալլա»-ի միջաւայրը պիտի դիմադրէ: Երկրորդ վտանգը Իսրայէլի երկարատեւ ներկայութեան օրինակացումն է: Եթէ զինաթափման գործընթացը ձգձգուի, Իսրայէլ կրնայ այդ պատրուակով մնալ ապահովական գօտիներու մէջ: Երրորդ վտանգը Լիբանանի ամբողջական կախումաւորութիւնն է ամերիկեան միջնորդութենէն: Իսկ չորրորդը՝ «Եունիֆի» դերի տկարացումն ու նոր միջազգային վերահսկողական համակարգի մը պարտադրումն է:

Լիբանանի առջեւ դրուած է բարդ ընտրանք մը: Պետութիւնը պէտք է վերադառնայ ամբողջ երկրին վրայ, զենքը պէտք է ըլլայ միայն պետութեան ձեռքին, եւ ոչ մէկ կուսակցութիւն կրնայ յաւերժ պահել պատերազմ հռչակելու իրաւունք մը: Բայց նոյնքան ճիշդ է, որ այս բոլորը կարելի չէ իրականացնել արտաքին հրամանով, Իսրայէլի սպառնալիքներուն տակ կամ քաղաքացիական պատերազմի մթնոլորտ ստեղծելով:

Այս բոլորը հաշուի առնելով կարող ենք ըսել, որ Ուաշինկթոնի համաձայնագիրը կրնայ դառնալ Լիբանանի համար նոր սկիզբ մը, բայց միայն այն պարագային, երբ ան վերածուի պետական լայն համաձայնութեան, ոչ թէ արտաքին պարտադրանքի: Լիբանանի փրկութիւնը չի կրնար գալ ո՛չ իսրայէլեան ճնշումէն, ո՛չ ամերիկեան վերահսկողութենէն, ո՛չ ալ զինեալ կուսակցական տրամաբանութենէն:

Փրկութիւնը կրնայ գալ միայն այն օրը, երբ լիբանանցիները համաձայնին մէկ պարզ սկզբունքի շուրջ. երկիրը չի կրնար ունենալ երկու գերիշխանութիւն, երկու բանակ եւ երկու որոշման կեդրոն:

Այլապէս՝ այս համաձայնագիրը խաղաղութեան դուռ մը ըլլալու փոխարէն կրնայ դառնալ նոր փոթորիկի նախերգանքը:

ԼԻԲԱՆԱՆ՝ «ԿԷՍ» ԳԵՐԻՇՆԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ... ՆՈՐ ՓՈԹՈՐԻԿԻ ՄԻՋԵՒ

Այս բոլորին խորքին կայ մէկ մեծ ճշմարտութիւն. Լիբանանի փրկութիւնը չի կրնար ծնիլ ուրիշներու սեղաններուն վրայ գծուած քարտէսներէն: Ո՛չ Ուաշինկթոն, ո՛չ Թէ՛ Աւի, ո՛չ Թեհրան եւ ո՛չ ալ որեւէ այլ մայրաքաղաք կրնայ Լիբանանին տալ այն խաղաղութիւնը, որ լիբանանցիները իրենք չեն որոշած կերտել:

Այո՛, պետութիւնը պէտք է վերադառնայ իր հողին, իր սահմանին, իր բանակին եւ իր որոշումին: Այո՛, զենքի հարցը այլեւ կարելի չէ ձգել անորոշութեան մէջ: Բայց այդ վերադարձը պէտք չէ ըլլայ պարտադրուած, ստորացուցիչ կամ ներքին ճակատումի պատճառ դարձող վերադարձ մը: Պետութիւնը եթէ պիտի «վերադառնայ», պէտք է վերադառնայ իբրեւ բոլորին տունը, ոչ թէ իբրեւ մէկ կողմի յաղթանակը միւսին պարտութեան վրայ:

Լիբանանի մեծագոյն «վերքը» միայն սահմաններուն վրայ չէ: Ան նաեւ ներսն է՝ վստահութեան փլուզումին, որոշումի կեդրոններու բազմացումին եւ արտաքին ուժերու վրայ յենելու հին սովորութեան մէջ: Այդ պատճառով ալ Ուաշինկթոնի համաձայնագիրը կրնայ ըլլալ առիթ մը, բայց կրնայ նաեւ վերածուի նոր տագնապի մը, եթէ ան չանցնի լիբանանեան ներքին համաձայնութեան, ազգային պատասխանատւութեան եւ պետական իմաստութեան ճամբով:

Լիբանան այսօր կանգնած է նուրբ եզրագիծի մը վրայ. կամ այս համաձայնագիրը կը դառնայ պետութեան վերակազմութեան սկիզբը, կամ ալ կը վերածուի նոր բաժանումներու, նոր վախերու եւ նոր խնամակալութիւններու դուռի: Երկիրը չի կրնար երկար ապրիլ կէս խաղաղութեան, կէս պատերազմի եւ կէս գերիշխանութեան տրամաբանութեամբ:

Վերջին հաշուով, Լիբանանի ապագան պիտի որոշուի ոչ միայն ստորագրուած թուղթերով, այլ այն հարցումին տրուելիք պատասխանով՝ ո՞վ է այս երկրին վերջնական տէրը: Եթէ պատասխանը լիբանանեան պետութիւնն է, ապա պէտք է բոլորը ենթարկուին անոր: Իսկ եթէ պատասխանը կրկին պիտի բաժնուի արտաքին մայրաքաղաքներու, զինեալ ուժերու եւ համայնքային հաշիւներու միջեւ, ապա համաձայնագիրները կրնան փոխուիլ, բայց փոթորիկը պիտի մնայ նոյնը:


Երեւան

«ԿԱՐԻՓ» ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆ ՆԱՐԺՈՒՄԸ. ՕՐՀԱՆ ՎԵԼԻ ՔԱՆԸՔ, ՄԵԼԻՀ ՃԵՒՏԵԹ ԵՒ ՕՔԹԱՅ ՌԻՖԱԹ

Ձատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԱՐԹՈՒՐ ՇԵՆԵԱՆ

Ի հակազդեցութիւն Ա. համաշխարհային պատերազմին, որ արմատական փոփոխութեան ենթարկեց մշակութային ու ընկերա-քաղաքական ըմբռնումները, յառաջ եկան գրական նոր շարժումներ, ինչպիսիք են՝ **տատայիզմը, գեր-իրապաշտութիւնը, գոյապաշտութիւնը** եւն.: Նշեալ երեք շարժումները, իրենց հերթին, Թուրքիոյ մէջ սնուցին գրական նոր հոսանք մը, որ ծանօթ է «Կարիփ» անունով (թրք.՝ Garip Akımı): Հիմնադիրներն են՝ բանաստեղծներ **Օրհան Վելի Քանըք** (1914-1950), **Մելիհ Դեւետեք** (1915-2002) եւ **Օքթայ Ռիֆաթ** (1914-1988): Անոնց նպատակն էր նորոգել թուրք բանաստեղծութիւնը՝ ձեռքազատելով հին կաղապարներէն ու ժողովուրդին հետ խօսելով պարզ, անմիջական ու հասկընալի լեզուով:



1941-ին կը հրատարակեն «**Կարիփ**» բանաստեղծական ժողովածուն, որ կը համախմբէ այս նոր ուղղութիւնը նշանաւորող իրենց գործերը (*Օ. Վելիէն՝ 24, Օ. Ռիֆաթէն՝ 20, եւ Մ. Դեւետեքէն՝ 16 բանաստեղծութիւն*): Իրենց մանիֆեստին մէջ, գոր գրի առած է Վելի, եւ որուն հաւանութիւն տուած են երկու գրչընկերները, խիստ քննադատութեան կ'ենթարկուի բանաստեղծութեան աւանդական ընկալումը, այդ կարգին՝ յանգ ու վանկի օգտագործումը: Ուղղակի կարեւորութիւն կ'ընծայուի ըսելիքի իմաստին ու արտայայտչականութեան, քան տաղաչափութեան:

Ինչպէս Օրհան Վելի կ'ըսէ՝
«**Բանաստեղծութիւնը խօսքի արուեստ է, որուն ամբողջ առանձնայատկութիւնը կը կայանայ արտայայտման մէջ: Այսինքն՝ ան ամբողջութեամբ իմաստէ քաղկացած է**»:

Այս երբեակը կը հաւատայ, որ բանաստեղծութիւնը ժողովուրդին պէտք է ծառայէ եւ ո՛չ թէ ինքնիշխան, հետեւաբար մերժելով կը մերժէ «գրականութիւնը՝ գրականութեան համար» սկզբունքը: Կը նախընտրէ հեռու մնալ ռոմանթիկ զեղումներէ ու հռետորաբանութենէ՝ համոզուած ըլլալով, որ անոնք մարդս կը խաբեն՝ քօղարկելով իրականութիւնը: Ըստ Վելիի՝ աշխարհակարգը փոխուած է, ազնուապետութիւնը անկում ապրած, եւ մարդիկ ռոմանթիկութենէն անցում կատարած են դէպի իրապաշտութիւն. այս իրավիճակին մէջ աւանդական բանաստեղծութիւնը չի կրնար հետաքրքրել զանոնք, ուստի պէտք է բանաստեղծութեան նոր կառոյց ստեղծել:

Ահաւասիկ վերջինէս նմոյշ մը՝ իր իսկ գրիչէն.

DALGACI MAHMUT

İşim gücüm budur benim,
Gökyüzünü boyarım her sabah.
Hepiniz uykudayken.
Uyanır bakarsınız ki mavi.

Deniz yırtılır kimi zaman,
Bilmezsiniz kim diker;
Ben dikerim.

Dalga geçerim kimi zaman da,
O da benim vazifem;
Bir baş düşünürüm başımda,
Bir mide düşünürüm midemde,
Bir ayak düşünürüm ayağımda,
Ne haltedeceğimi bilemem.

Այս կտորը իր մէջ կ'ամփոփէ «Կարիփ» շարժումին հիմնական տարրերը. **բնական, հասկնալի լեզու, առօրեայ ապրումներու եւ մտածումներու բանաստեղծականացում, իմաստակեղոն մօտեցում, հռետորագերծ ոճ ու անսպասելի պատկերներ:**

Շարժումին նախահիմքը դեռ 1930-ականներուն կը դրուի, երբ Օրհան Վելի «Վարլըք» պարբերաթերթին մէջ (Varlık Dergisi) կը հրատարակէ «Oaristys», «Ebabıl», «Eldorado» եւ «Düsüncelerimin Basucunda» խորագրով բանաստեղծութիւնները: Անոր կ'ընկերակցին Մելիհ Դեւետեք եւ Օքթայ Ռիֆաթ՝ իրենց բանաստեղծութիւններով: Պարբերաթերթը Օրհան Վելիին եւ անոր ընկերները այս տողերով կը ծանօթացնէ գրական աշխարհին.

«**Վարլըք**»-ի բանաստեղծութեան բաժինը կը հարստանայ նոր եւ տաղանդաւոր անուններով: Օրհան Վելի, որուն չորս բանաստեղծութիւնները պիտի կարդաք ստորեւ, արդէն իսկ հասուն բանաստեղծ է, թէւ մինչեւ այսօր իր գործերը չէին հրատարակուած: Մեր յաջորդ թիւերուն մէջ ւաւելի ակնյայտ պիտի դառնայ իր եւ ընկերներուն՝ Օքթայ Ռիֆաթի, Մելիհ Դեւետեքի եւ Մեհմեթ Ալի Մելի (Օրհան Վելիի գրական անունը – Ա. Շ.) բերած նոր շունչը մեր բանաստեղծութեան:

Անոնք օտար գրական հոսանքները ո՛չ թէ նոյնութեամբ թուրք գրականութիւն փոխադրեցին, այլ տեղայնացուցին՝ անոնց տալով տեղական մտածողութեան, աշխարհընկալման, նիստուկացին եւ սովորութիւններուն դրոշմը: Այս պատճառով անոնց արտադրութիւնները համեմուած եղան թրքական բառուրանով, ասացուածքներով ու մշակութային տարրերով, որոնք, ի դէպ, նախապայման էին՝ բանաստեղծական խօսքը ժողովուրդին մօտեցնելու համար:

Թէւեւ այս երեք անունները տեսականօրէն միախառնել կը ներկայանային ընթերցող հանրութեան, սակայն իւրաքանչիւրը կը մարմնաւորէր «Կարիփ»

շարժումի մէկ երեսակը՝ այդ շարժումին բերելով իր ուրոյն դիմագիծը: Օրինակ՝ Օրհան Վելի հակուած էր բանաստեղծութեան թեմա դարձնելու սովորական մարդը՝ իր կենցաղով, առօրեայ հոգերով, հոգեբանութեամբ ու մտածումներով: Անոր բանաստեղծութիւններուն մէջ յաճախ կարելի է հանդիպիլ առաջին հայեացքէն պարզ թուող, բայց մարդկային խորունկ հէնք ներկայացնող խոհերու, աւելի շատ՝ ապրումներու: Հոն կը տողանցեն Սթամպուլի փողոցները, աշխատաւորները, ձկնորսները, նաւաստիները, վաճառականներն ու ընդհուպ պետական պաշտօնեաները: Հասարակ քաղաքացին միշտ ներկայ է ո՛չ միայն իր, այլ նաեւ իր միւս գրչընկերներուն գործերուն մէջ: Ինչ կը վերաբերի Մելիհ Դեւետեքին, ապա ան փիլիսոփայական ուղղութիւնը զարգացնողը էր՝ առանց հրաժարելու «Կարիփ» շարժումը յատկանշող էական գիծերէն. անպաճոյճ լեզու, անմիջականութիւն, առօրեական, բայց տպաւորիչ պատկերներ: Ահաւասիկ նմոյշ մը իր գործերէն՝ «Çok Güzel Sey» վերնագրով.

Yaşamak güzel şey doğrusu
üstelik hava da güzelse
hele gücün kuvvetin yerindeyse
elin ekmek tutmuşsa bir de
hele tertemizse gönlün
hele kar gibiye alnın
yani kendinden korkmuyorsan
kimseden korkmuyorsan dünyada
iyi günler bekliyorsan hele
iyi günlere inanıyorsan
üstelik hava da güzelse
Yaşamak güzel şey,
Çok güzel şey doğrusu!

Ան ապրելու գեղեցկութիւնը ո՛չ թէ բարձր խաւաներու մէջ կը գտնէ, այլ սովորական երեւոյթներու եւ ապրումներու. լաւ եղանակ, աշխատանք, մաքուր սիրտ, հանգիստ խիղճ, ապագայի հանդէպ յոյս: Այստեղ եւս հասարակ մարդն է՝ ոչ-միութապաշտ, միմիմալիստ, կեանքի բարիքները տեսնող ու գնահատող եւ նուազագոյնով ուրախացող:

Գալով Օքթայ Ռիֆաթին՝ այս երբեակին ամենաբազմակողմանի բանաստեղծն է ան: Անոր բանաստեղծութիւնները կը շօշափեն բազմազան թեմաներ, ինչպիսիք են՝ առօրեայ կեանքը, սերը, բնութիւնը, ինչպէս նաեւ գոյաբանական ու ընկերա-քաղաքական հարցեր: Համեմատաբար աւելի ազատ է լեզուի գործածութեան մէջ, այնքան մը, որ երբեմն ոչ-բանաստեղծական կը թուի իր լեզուն: Չուարթախոհութիւնը եւս մէկ յատկութիւն է, որ զինք կը զատորոշէ իր գրչընկերներէն: Ահա նմոյշ մը իր բանաստեղծութիւններէն՝ «Sizden sonra».

siz taşınıp gittikten sonra
tadı tuzu kalmadı buraların
dimdizlak yalıdaki o kahve
sipsivri ortada o çeşme
geri geri gidiyor ayaklarım
vapur dağılıyor yoksun
sinema boşalıyor yoksun
akşam simitçisi geçmiyor mu
bildik eski bir ses huylanıyorum
gözlerim pencerede seni arıyor
camı açıyorsun gibi geliyor
camı açıyorsun gibi geliyor
sarkıyorsun gibi geliyor
gerisi çorap söküşü gibi

Թուրք աւանդական բանաստեղծութիւնը պիտի չներկայանար այս «ոչ-բանաստեղծական» բառերով: Անոր համար աւելի քան անլուրջ ու մակերեսային պիտի հնչէին tadı tuzu kalmadı արտայայտութիւնը (համ ու հոտը չմնաց) եւ dimdizlak ածականը (մեւ-մերկ, ամբողջ ունեցածը կամ միջոցները կորսնցուցած):

Հոս ճիշդի ու սխալի հարց չկայ ի հարկէ. պարզապէս ամէն ժամանակ բանաստեղծութեան ի՛ր ձեւը կը ստեղծէ կամ կը պարտադրէ: Ուստի կարելի չէ հիմը ստորագնահատել՝ պարզապէս նորը գովաբանելու համար:

1949-ին երբեակը գրական երկշաքաթաթերթ կը հիմնէ «Եւփրաթ» անունով: Գաղափարը կը ծնի **Պետրի Ռահմի Էյուպօղլուի** (1911–1975), **Աալիսին Տինոյի** (1913–1993), **Նեմաթի Դումալի** (1921–2001) եւ **Սապահաթթին Էյուպօղլուի** (1909–1973) հետ հանդիպումներուն ընթացքին: Նիսբական ծախսերը կը ստանձնէ դիւանագէտ, Խաղաղութեան ընկերակցութեան նախագահ եւ գրող **Մահմութ Տիքերտեն** (1916–1993), որ տարբեր տարիներու գործած է իրքեւ Թուրքիոյ դեսպան Յորդանանի, Իրանի, Կանաչի եւ Հնդկաստանի մէջ: Երկշաքաթաթերթը քսանութ թիւ լոյս կ'ընծայէ, վերջինը՝ 1950-ին:

Նոյն տարուան Նոյեմբերին կը մահանայ Օրհան Վելի՝ ուղեղի արիւնագեղումէն: Անոր մահով վերջ կը գտնէ «Կարիփ» շարժումը, որովհետեւ իր գրչընկերները՝ Մելիհ Դեւետեք եւ Օքթայ Ռիֆաթ, չեն շարունակեր այդ ուղին, այլ կը փորձեն նոր արտայայտչաձեւեր որոնել՝ դուրս գալով «Կարիփ»-ի գծած սահմաններէն:

Հանրապետական շրջանի այս երեք բանաստեղծները կը համարուին թուրք արդի բանաստեղծութեան հիմնադիրները: Իրենց նորարարական իրագործումներով անոնք ո՛չ միայն կը յեղափոխեն գրական աւանդական ընկալումները, այլ նաեւ կ'որոշեն թուրք ազատ բանաստեղծութեան հետագայ իրավոյթը:

Պէյրութ, 29 Յունիս 2026

Օգտագործուած աղբիւրներ.

- Sinan Bakır (2021). *Garip ve İkinci Yeni Şiirinin Kaynakları*. Dede Korkut Uluslararası Türk Dili ve Edebiyatı Araştırmaları Dergisi, 10/25, s. 1–33.
- Mehmet Narlı (2009). *Garip Poetikasının Eleştirisi*, Yeni Türk Edebiyatı Araştırmaları, 2. Temmuz-Aralık 2009, s. 129–147.
- *Orhan Veli'ye paltosunu sattıran dergi: Yaprak*, Fikriyat, 25.12.2020.



ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



«ԴԻԼԴԻԼԵԱՆՆԵՐ. ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՍՓԻՌՔԻՑ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-րդ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Հայաստանի պատմության քանգարանում տեղի ունեցավ «Դիլդիլեաններ. լուսանկարչական ժառանգություն Սփիրքից» խորագրով ցուցահանդեսի բացումը:

Ցուցահանդեսը կազմակերպուել է քանգարանի եւ Դիլդիլեան ընտանիքի ժառանգորդ, Հարաւային Կոնէկտիկուտ համալսարանի փիլիսոփայութեան բաժնի պրոֆէսոր Արմէն Մարտութեանի հետ համագործակցութեամբ: Թանգարանի տնօրէն Դաւիթ Պօղոսեանը նշեց, որ ցուցադրութեան նպատակն է ներկայացնել Հայաստանից դուրս պահպանուող արժէքաւոր ժառանգութիւնը:



«Այս ցուցադրութեամբ, որ տեղի է ունենում Հայոց ցեղասպանութեան տարելիցին, մենք ցանկանում ենք ներկայացնել այն արժէքաւոր ժառանգութիւնը, որը պահուում է Հայաստանից դուրս»: Դիլդիլեանների մի քանի սերունդ դեռեւս 19-րդ դարից լուսանկարչութեամբ են զբաղուել Օսմանեան կայսրութեան տարբեր քաղաքներում՝ Մերասոփայում, Մարգուսում, Մամսունում եւ այլուր: Բռնագաղթից յետոյ նրանք հաստատուել են Յունաստանում եւ ԱՄՆ-ում, որտեղ եւս շարունակել են իրենց գործունէութիւնը: Ցուցահանդէսը հիմնուած է Դիլդիլեան ընտանիքի արխիւի վրայ՝ ներառելով ապակէ նեգատիւներ, գծանկարներ, փաստաթղթեր, նամակներ, ինչպէս նաեւ Յոլակ եւ Արամ Դիլդիլեանների կողմից շուրջ 34 տարիների ընթացքում արուած տասնեակ լուսանկարներ եւ ընտանեկան ժառանգութեան այլ ուշագրաւ իրեր:

Դաւիթ Պօղոսեանի խօսքով՝ Դիլդիլեանները ոչ միայն ականատես են եղել պատմական ողբերգական իրադարձութիւններին, այլեւ աջակցել են Ցեղասպանութիւնից տուժած բազմաթիւ հայերի:

«Ի հարկէ, պէտք է կարելորդ նաեւ ցուցահանդէսի բացման օրը՝ ապրիլի 24-ի: Յոյներն ու հայերն ունեցել են նման ցաւալի փորձ՝ ցեղասպանութիւն, ջարդեր, ու դրանց մասին կարելորդ է միշտ յիշել», - ասաց ՀՀ-ում Յունաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Խրիստոս Սոֆիանոպոլոսը: Իր հերթին, Արմէն Մարտութեանը նշեց, որ ուրախ է ցուցահանդէսը Երեւանում ներկայացնելու համար. «Ուրախ եմ, որ ցուցահանդէսը այսպէս լիակատար կերպով կազմակերպուեց Երեւանում, իմ նախնիները հաստատ գոհ կը լինէին: Ի հարկէ արտերկրում ունեցել ենք բազմաթիւ ցուցադրութիւններ, նոյնիսկ 4 կամ 5 հատ Թուրքիայում, երբ առաջ դա հնարաւոր էր», - ասաց Արմէն Մարտութեանը:

ԱԶՆԱԴՈՒՐ, ԲԱԲԱԶԱՆԵԱՆ, ՕՐԲԷԼԵԱՆ

Արամ Խաչատրեան համերգասրահում տեղի ունեցավ տարուայ ամենապատուած մշակութային իրադարձութիւններից մէկը՝ «Հայ Եռալեզուն» համերգը: Երեկոն նուիրուած էր Շառլ Ազնաւուրին, Առնօ Բաբաջանեանին եւ Կոնստանտին Օրբէլեանին՝ երեկոյ, որը ստիպեց հազարաւոր սրտերի բաբախել...



Pop Symphony Production-ի կողմից կազմակերպուած այս միջոցառումն առանձնացաւ իր բարձր մակարդակով, տպաւորիչ լուսային շոուով եւ սիմֆոնիկ հզօր հնչողութեամբ:

Համերգն աւարտուեց բուռն ու երկարատեւ ծափահարութիւններով:

Կազմակերպչական փայլուն աշխատանքի շնորհիւ հանդիսատեսը հնարաւորութիւն ունեցաւ մէկ երեկոյի ընթացքում ճամբորդել հայկական երաժշտութեան ոսկէ դարաշրջանով՝ երիտասարդ երգիչների կատարումների շնորհիւ: Սա եւս մէկ ապացոյց էր, որ իրական արժէքները երբեք չեն հնանում, իսկ մերօրեայ արտիստները պատուով են շարունակում այդ մեծ ճանապարհը:

«ՎԱՍԻԼԻ ՊԵՏՐԵՆԿՈՅԻ ԴԻՐԻԺՈՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ» ԵՐԵՒԱՆՈՒՄ

Երեւանը երկրորդ անգամ հիւրընկալեց տարածաշրջանի համար բացառիկ կրթական ու մշակութային նախաձեռնութիւն՝ «Վասիլի Պետրենկոյի դիրիժորական ակադեմիա»-ին: Աշխարհահռչակ մայեսթրոյի գլխաւորութեամբ աշխարհի մի քանի տասնեակ երկրներից ընտրուած երիտասարդ դիրիժորները հնարաւորութիւն ունեցան կատարելագործել իրենց մասնագիտական հմտութիւնները, աշխատել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախմբի հետ եւ մասնակցել բացառիկ վարպետաց դասերի:

Ակադեմիան ոչ միայն կրթական կարեւոր հարթակ է, այլ նաեւ Հայաստանի մշակութային հեղինակութեան եւ միջազգային համագործակցութեան հերթական վկայութիւնը:

Մեծն Բրիտանիայի Թագաւորական ֆիլհարմոնիկ նուագախմբի գլխաւոր դիրիժոր Վասիլի Պետրենկոն երկրորդ տարին է անցկացնում իր «Դիրիժորական ակադեմիան» Հայաստանում: Նա առաջին անգամ 1980-ականներին է եղել Հայաստանում եւ միշտ սիրով է վերադառնում, քանի որ բարձր է գնահատում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախմբի մասնագիտական մակարդակը՝ մայեսթրօ Էդուարդ Թօփչեանի գլխաւորութեամբ: Ակադեմիայի կազմակերպիչներն են «Պրիմաւերա» բարեգործական հիմնադրամը (գեղարուեստական խորհրդի նախագահ՝ Վասիլի Պետրենկոյ) եւ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախումբը (գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր դիրիժոր՝ Էդուարդ Թօփչեան):

Մեծանուն դիրիժորը Արամ Խաչատրեան համերգասրահում հանդէս եկաւ Ազգային ֆիլհարմոնիկի հետ համատեղ համերգով, որն ընդունուեց երկարատեւ ծափերով պրաւունքով: Համերգի ծրագրում ընդգրկուած էին Ֆ. Բուզոնի «Տուրանգոտ» սիւիտը, Մորիս Ռաւելի «Շենեկագաղէ» սիմֆոնիկ այտիւտը եւ երեք պոէմ ձայնի եւ նուագախմբի համար գործը, որի ընթացքում հրաշալի կատարումով հանդէս եկաւ սոփրանօ Ալեքսանդրա Լոուն՝ արժանանալով ջերմ ընդունելութեան:

Իրաքանչիւր երաժշտասէր, որն առիթ է ունեցել երէկ րեմում տեսնել Վասիլի Պետրենկոյին, կարող է փաստել, որ նա շատ ինքնատիպ, արտիստիկ եւ զգացմունքային դիրիժոր է, ով կարողացաւ հանդիսատեսին գերել ու լարուած պահել, այդ հրաշալի ու իրօքինակ, համերգի ընթացքում:

Դիրիժորը կարծում է՝ դա կապուած է երաժշտութեան հետ: «Այն, ինչով զբաղւում էք, չպէտք է դիտարկէք որպէս մասնագիտութիւն, այն պէտք է լինի ձեր հոբբին...»:

Արամ Խաչատրեան համերգասրահում տեղի ունեցաւ «Վասիլի Պետրենկոյի դիրիժորական ակադեմիա»-ի վեց մասնակիցների կալա անմոռանալի համերգ՝ աշխարհի տարբեր երկրներից ընտրուած 6 կոմպոզիտորների մասնակցութեամբ:

«JAZZICAL KOMITAS». ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՃԱԶԻ ԲԱՅԱՌԻԿ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Արամ Խաչատրեան համերգասրահում Հայաստանի պետական կամերային նուագախումբը ներկայացրեց բացառիկ «Jazzical Komitas» համերգային նախագիծը՝ միաձուլելով հայկական հոգեւոր ու ազգային երաժշտութեան խորութիւնն ու ջազային նորարարութեան ազատ արտայայտչականութիւնը:

Համերգի մենակատարն էր Նիւ Եորքից ժամանած դաշնակահար եւ կոմպոզիտոր Ղոնէլ Մարթինը: Համերգը ղեկավարում էր բրիտանահայ դիրիժոր եւ թենոր Սիփան Օլահը:

Երեւանեան հանդիսատեսն առաջին անգամ հնարաւորութիւն ունեցաւ կենդանի ունկնդրելու Ղոնէլ Մարթինի հեղինակած «Jazzical Komitas» մշակումները՝ Հայաստանի պետական կամերային նուագախմբի կատարմամբ:

Միջազգայնօրէն ճանաչուած դաշնակահար եւ կոմպոզիտոր Ղոնէլ Մարթինը յայտնի է իր դասական վիրտուոզութեան եւ ջազային իմպրովիզացիայի պայթուցիկ համադրութեամբ: Նրա համագործակցութիւնների բուռն են համաշխարհային ճանաչում ունեցող արուեստագէտներ՝ Ալան Մենկենը, Ֆերգին, Սթիվ Ուանտըրը եւ օփերային լեզնեղ Քեթլին Պաթլը:

Չունենալով հայկական ծագում՝ Ղոնէլ Մարթինի կապը Կոմիտասի երաժշտութեան հետ տեւում է աւելի քան վեց տարի: Նա իրեն անուանում է «ընտրուած հայ»՝ իր խոր գգայական մեկնաբանութիւններով յուզելով հանդիսատեսին Երեւանում, Լոս Անճելէսում եւ Նիւ Եորքում: համաշխարհային շրջագայութեան, որը կ'ընդգրկի 20 քաղաք: Ղոնէլ Մարթինի, Սիփան Օլահի եւ Հայաստանի պետական կամերային նուագախմբի առաջին համագործակցութիւնը տեղի է ունեցել 2025 թուականի հոկտեմբերի 4-ին՝ Նիւ Եորքում, յաջորդ համերգը Երեւանում է, սպասում է նաեւ Լոնտոնում:




ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ
Երեւան

ՏՐՏԱՄԱՐԵԱԽԻԾ ԳՈՅՆԵՐԻ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ

«Հազարամեայ խաւարից յետոյ նա լոյս բերեց նկարչութիւն»,- կերպար-
ւեստում խաւարական Վերածննդի նախահայր համարուող Շոթթո տի Պոնտո-
նի մասին այս կերպ է արտայայտուել մեծն Բոկկաչօն: Խաւարից յառնող
լուսաբեր այդ խորհուրդը կայ նաեւ հայկական Շոթթոյի՝ Գեորգ Գրիգորեանի
(1897-1976) ստեղծագործութեան մէջ: Դիշո է, ի հակառակ իր խաւարացի
անուանակցի պայծառ, բայց եւ սառը գոյների, մուգ ու թանձր է հայ նկարչի
գունապնակը, սակայն ընդհանուր եմ նրանց ստեղծագործութիւնների ան-
կեղծութիւնն ու պարզութիւնը, մարդու հանդէպ երկուսի տաժած աներեր
հաւատը եւ գեղարուեստական գուսպ արտայայտչամիջոցների կիրառումը:

Տարբեր վարկածներ կան Գեորգ Գրիգորեանի՝ Շոթթո անունը ստանալու
շուրջ: Էականը դա չէ, այլ այն, որ առանց այդ արուեստագէտի անհնար է
լիարժէք պատկերացնել 20-րդ դարի հայ կերպարուեստի պատմութիւնը:
Ծնունդ լինելով Անդրկովկասի «մշակութային մայրաքաղաք» Թիֆլիսում՝ նա
զգալի դեր խաղաց, այսպէս կոչուած, «Թիֆլիսեան դպրոցի» կազմաւորման
գործում՝ դառնալով դրա վառ ներկայացուցիչը:



Հենց ծննդավայրն է
ձեւաւորել ապագայ
նկարչի գեղարուեստա-
կան մտածողութիւնը:
Դրանք 1920-30ական
թուականներն էին, երբ
Շոթթօն ակտիւօրէն
սկսեց մասնակցել հայ
եւ վրացի նկարիչների
ցուցահանդէսներին:
Նրա ստեղծագործա-
կան ձեռագրի ու ընդ-
հանրապէս գեղարուես-
տական աշխարհայ-
եացքի վրայ մեծ է եղել
վրաց ինքնուս նկարիչ,
պրիմիտիւիզմի նշա-
նաւոր վարպետ Նիկոյ
Փիթոսմանիի ազդեցու-
թիւնը: Այդ մասին հայ
նկարիչը հետագայում
պիտի գրեր. «Աւելի
Փիթոսմանուց, քան մի

ուրիշ նկարչից ես հասկացայ, որ արուեստագէտն իր ժողովրդի մի մասն է, եւ
կտալի վրայ եղած գոյնը, գիծը, նկարչական միտքն ընդհարապէս իր ապրած
միջավայրի ու ժամանակի ծնունդն են»:

Անուրախ մանկութիւն, դժուար կեանք եւ նոյնպիսի ծերութիւն է ունեցել
Գեորգ Գրիգորեանը: Աշակերտ է եղել «փագէիներին» մօտ ու յաճախ է նկա-
րել դուքանների պատերին: Յետագայում, երբ տեղափոխուեց Երեւան, այդ
ամէնը յիշողութեամբ վերանկարեց թիֆլիսեան կողորիտով շնչող «Իմ կեան-
քը» նկարաշարում: Չնայած անբարենպաստ պայմաններին՝ այնուամենայ-
նիւ գտնուել են մարդիկ, ովքեր օգնել են պատանի նկարչին ստանալու գե-
ղարուեստական կրթութիւն: Սկզբում սովորել է Թիֆլիսի Գեղարուեստը խրա-
խուսող կովկասեան ընկերութեան նկարչութեան ու քանդակի դպրոցում, որ-
տեղ նրա ուսուցիչն է եղել մեծանուն հայ գեղանկարիչ Եղիշէ Թադեւոսեանը:
Ապա ուսումը շարունակել է Մոսկուայում՝ Լիւբով Պոպովայի մօտ: Հայ
աւանդական նկարչութեան եւ ռուս խորհրդային գեղարուեստի տարրերն էլ
սնունդ են հայ գեղանկարչի վրձնաշխարհը:

Դիմանկարն է եղել Գեորգ Գրի-
գորեանի նախասիրած ժանրը: Նա
վրձնել է անցեալի ու ժամանակա-
կից, հայ թէ օտար գրողների ու ար-
ւեստագէտների դիմանկարներ եւ
նրանց շարքում Մեծաբեց ու Վա-
րուժան, Մայեաթ Նովա ու Փարա-
ջանով, Բալզակ ու Մաքսիմ Գորկի,
շատ ուրիշներ: Յատկապէս Կոմի-
տասին պատկերող գործերը դիտե-
լիս սարսուռ է անցնում մարմնովդ:
Աննկարագրելի ներգործութեան ուժ
ունեն դրանք եւ մեր ժողովրդի թէ՛
անցեալի, թէ՛ ներկայ տխուր ճակա-
տագրի արտայայտութիւններ են:

Եղեռնի ու մայրութեան թեմաները
կարմիր թելի նման անցնում են Շոթ-
թոյի ստեղծագործութեան միջով:
Առանձնացնենք նախ՝ «Մանուշակի
տառապանքը» աշխատանքը, որը
նկարչի խորը զգացումների թանձ-
րացումն է ասես: Պատկերուածն
այն հազարաւոր խլեակներից մէկն է, որ կորցնելով հարազատներին՝ հրաշ-
քով է փրկուել 1915-ի նախճիրից: Նրա ողբերգական պատմութիւնն ու տառա-
պանքը տեսականօրէն յուզել են նկարչին, որն արտացոլուել է այդ միայնակ
կնոջ մի քանի դիմանկարներում: Չենք կարող, ի հարկէ, նաեւ շրջանցել հեղի-
նակի ամենայայտնի ու ազդու կտարը՝ «Ռեքուիեմը», որի եւ՝ թեման, եւ՝ կա-
տարման ոճը զարգացուած են հետագայ շրջանի նկարներում:

Յաջորդը «Մայրը» ստեղծագործութիւնն է, որում ջերմութեան հետ միասին
ու թերեւս դրանից առաջ մայրական հայեացքում դաջուած է ամբօղ մտա-
հոգութիւնը: Վերջինս արտայայտուած է ավիով փակուած բերանի, լոյսուսու-
ւերի հակադրութեան ու գունային համադրութիւնների, ինչպէս նաեւ ձեւերի
պարզ վերաբարտարման միջոցներով:

Նատիւրմորտն առանձնայատուկ տեղ ունի հայկական Շոթթոյի արուես-

ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿՄԱՆ

տում: Դրանցում յաղթահարուած է քարացածութիւնը, որ ենթադրաբար պար-
տադիր է այս ժանրին պատկանող աշխատանքների համար: Աւելին՝ նրա
նատիւրմորտներում պատկերուած իրերը՝ բաժակներ, սկահակներ, շշեր եւ
այլն, շնորհիւ իրենց դասաւորութեան եւ եզրագծերի շեշտուածութեան, կար-
ծէք շարժման մէջ լինեն:


Գեորգ Գրիգորեան-ջոտտոյի՝ յայտնի-անյայտ այս նկարչի ստեղծագոր-
ծութիւններին եւ նրա յուշածեռագրային ժառանգութեանն այսօր կարելի է
ծանօթանալ Երեւանի սրտում՝ Մաշտոցի 45Ա. հասցէում գտնուող արուես-
տանոց-թանգարանում, որը բացուել է նկարչի մահից անմիջապէս յետոյ այ-
րու՝ Դիանա Ուկլեբայի ջանքերով: Երբ առաջին անգամ եղայ թանգարա-
նում, նա դեռ ողջ էր եւ հատ առ հատ ու մանրամասնօրէն էր պատմում սիրելի
ամուսնու իւրաքանչիւր կտալի մասին: Դրանցում գերիշխողը լուսատու թախ-
ծի տրամադրութիւնն է, որ անմիջապէս համակում է դիտողին: Զաւակներ չեն
ունեցել նրանք. այդպիսիք նրանց համար եղել են իրենց նկարները: Երեւի դա
է պատճառներից մէկն այն սակաւ հանդիպող երեւոյթի, երբ ողջ կեանքում ոչ
մի նկար չեն վաճառել: Ապրել են դժուարութեամբ, բայց չեն կամեցել
բաժանուել իրենց հոգեզաւակներից:

Իրօք, եթէ չլինէր վրացուի
այդ կնոջ անմնացորդ սէրն ու
երկիւղածութեան հասնող վե-
րաբերմունքն առ արուեստա-
գէտ ամուսինը, հազիւ թէ այ-
սօր ունենայինք այդ ամբողջ
հարստութիւնը: Միջամանջա-
յին 1937-ին, երբ Շոթթօն կա-
մեցել է ոչնչացնել իր շատ գոր-
ծեր, մեծապէս կնոջ նուիրուա-
ծութեան շնորհիւ եւ դրանք
պահպանուել: Ահա, օրինակ,
որմնանկարի այն սքանչելի
նախանկարը, որ բուժած իր
վերքերը՝ այսօր ցուցադրում է
սալակու տակ...

Հայ նկարչի անհաշիւ հիւանդ
օրերի պահապան հրեշտակն է
եղել տիկին Դիանան, որին նա
«փոխադարձել է»՝ ստեղծելով
ազնուութեան ու երախտագի-
տութեան ընդգծուած դրոշմը
կողոյ դիմանկարների մի ամ-
բողջական շարք: Արուեստի
(հայ թէ համաշխարհային) պատմութեան մէջ շատ չեն դէպքերը, երբ մէկն
սկսել է լրջօրէն զբաղուել արուեստի միաժամանակ երկու ասպարէզներով ար-
դէն առաջացած տարիքում եւ նկատելի յաջողութիւնների հասել 2 ասպարէզ-
ներում էլ: Նկարիչ ամուսնու մահից յետոյ միայն, երբ տիկին Տիանան արդէն
68 տարեկան էր, վրձին առաւ ձեռքը եւ վերջիշելով տասնամեակներ առաջ
ստացած գեղարուեստական կրթութիւնը՝ սկսեց նկարել: Նկարում էր բնու-
թիւն, ամուսնուն: «Վերջին հալեացքը» նկարում, ստեղծուած ամուսնու մահից
հինգ տարի անց, նա Շոթթոյին նկարել է յիշողութեամբ: Նայում ես նրա միւս
գործերը, կարդում «Մեր սէրը՝ անմար կանքեղ» վերնագրով նրա հեղինակած
ժողովածուի բանաստեղծութիւնները եւ խոնարհում այդ մեծ սիրոյ առաջ:
Դրանցում բանաստեղծ նկարչուիկն պատմում է «լռութիւն հագած» իր
մենութեան, «անձայն հեռացած» ամուսնու հանդէպ տաժած անթաքոյց սիրոյ
մասին:

Չգիտես ինչու իսկական սի-
րոյ ու հաւատարմութեան օրի-
նակները մենք պեղում ենք դա-
րերի խորքում եւ համաշխար-
հային արուեստի պատմութեան
մէջ: Մինչդեռ մեր օրերում եւ մեր
կողքին էլ են հիւսուել ու հիւս-
ւում նման պատմութիւններ:
Դրանք իւրովի ներկայացնելու
առաքելութիւն է ստանձնել Շոթ-
թոյի երեւանեան թանգարանը՝
մէկ յարկի տակ միաւորելով
իրար կողք կողքի ապրած ու
ստեղծագործած արուեստա-
գէտ գոյգերի գործունէութիւնը՝
ներկայացնելով նրանց ստեղ-
ծագործական համատեղ ու-
ղին: Դրանք հետաքրքրական
են նաեւ ստեղծագործող 2 ան-
հատների փոխադարձ ազդե-
ցութեան ու գեղագիտական
սկզբունքների միահիւս ձեւա-
ւորման առումներով:

Որպէս օրինակ բերենք վեր-
ջին շրջանում իրագործուած
երկու յաջողուած նախագծեր՝ Ուրիւրուած գրող, հասարակական գործիչ Զա-
պէլ Եսայեանին ու նկարիչ Տիգրան Եսայեանին եւ Մելինէ ու Երուանդ Քո-
չարների կիսատ մնացած երկխօսութեանը: Շարունակելի այս ուշագրաւ ձեռ-
նարկները թոյլ են տալիս նորայայտ միւթերի ու փաստերի միջոցով վերա-
կազմաւորելու արուեստագէտների կեանքի ու ստեղծագործութեան մինչ այժմ
անյայտ ու քիչ ուսումնասիրուած դրուագները:





Մեծ Երազի Ճամբուն Մշտնորենքը

ՓՐՈՖ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Պրուսա, 1910 - Ուոթըրթաուն, Գեկտեմբեր 25, 1991

«ԶԱՐԹՕՆՔ»Ը ՄՆԱՅ ԻՐ ՄՆԱՅՈՒՆ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔԻՆ ԱՐԺԱՆԻ ՇՈԳԵԶԱՒԱԿԸ

(Ծարունակուած նախորդ թիւէն)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ՝ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ

Ան կանուխէն՝ դեռ 1932-էն անդամագրուած էր բարեսիրական մեր մեծագոյն կազմակերպութեան՝ Հ.Բ.Ը.Միութեան, Կիպրոս իր պաշտօնավարած օրերուն: Լիբանան կը սկսէր կարեւորութիւն ստանալ Միջին Արեւելքի մէջ, հետզհետէ, մանաւանդ երկրի ձեռներէջ ժողովուրդին եւ ընձեռուած տնտեսական թէ քաղաքական պատեհութիւններուն: Լիբանանահայութիւնը եւս ունէր աւելի պատեհութիւններ արմատաւորուելու այս երկրին մէջ, պայմանները ձեռնառու էին աւելի քան դրացի երկիրները:

Հետզհետէ ազգային կեանքին կիզակէտը սկսած էր սեւեռիլ Պէյրութի վրայ եւ 1945-ին Բ. Թովմասեան նախատեսելով ստուերացող լիբանանահայ գաղութին կարեւորութիւնը այս տարածաշրջանէն ներս, կը համոզէ Գահիրէի Բարեգործականի կեդրոնը օժտելու Լիբանանի համար առանձին ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովով մը: Ան 1948-1972 տարիներուն, ամբողջ 24 տարի կը վարէ աստեղապրութիւնը այս յանձնաժողովին:

Իրեն յատուկ նրբամտութեամբ եւ հաղորդականութեամբ՝ լեզու գտաւ լիբանանահայութեան վերնախաւին հետ եւ յաջողեցաւ կարեւոր թիւով դէմքեր բոլորել Բարեգործականի եւ ազգային-եկեղեցական հրատապ հարցերով ստանձնելով պատասխանատուութիւններ: Տակաւին՝ իր խորհուրդներով զանոնք բարերարութիւն կատարելու մղեց:

Նոյնպէս եղած է հիմնադիրներէն Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան, որուն կեդրոնական վարչութեան աստեղապրութիւնը վարած է 1940-1953 տարիներուն: Թէեւ ի՛նք է եղած գլխաւոր մղիչ ուժը Միութեան, սակայն Թովմասեան ջանացած է աշխատիլ լուելեայն, առանց իր անունը առաջ նետելու, յաճախ քուլիսներու ետին, այն քաղաքական գիտակցութեամբ որ ոչ կուսակցական դէմքով մը Բարեգործականը աւելի պիտի կարենար զոնցել ժողովրդականութիւն եւ լայն շրջանակ: Արդէն հո՛ն ալ կը կայանայ իր դիւանագիտութիւնը, որ եղաւ իր ճամբու ընկերը ազգային քաղաքական ծառայութեան բովանդակ ուղիին:

Գիտէր թէ Բարեգործականի հիմնադրութեան համար յարգուած անձնաւորութիւններու՝ Վահան Մ. Քիւրքճեանի, Միքայէլ Նաթանեանի, Տոքթ. Ն. Տաղաւարեանի, Մկրտիչ Անդրանիկեանի ներդրումը առանձնաշնորհեալ եղած էր եւ անհիփարհինքի: Բոլորուած Նուպար փաշայի շուրջ, այս մտաւորականները նոր սկիզբ մը կը դնէին ազգային կեանքի երկնակամարին՝ ՀԲԸՄ-ի ծնունդով: Ու այս գիտակցութեամբ ալ, նոյն նախանձախնդրութիւնը ցուցաբերեց Բ. Թովմասեան, Լիբանանի Բարեգործականի եւ ՀԵԸ-ի համար:

Ու այդ սկզբունքային իր քայլը պահեց միշտ ան, ամէն հանգրուանի թէ ժամանակաշրջանի: Իր յարաբերութիւնները մանաւանդ ցկեանս նախագահ Ալեք Մանուկեանի հետ մնացին ջերմ եւ որմէ օգտուեցան եւ Բարեգործականը իր ամբողջութեանը մէջ եւ Ռամկավար Կուսակցութիւնը իր բոլոր կառուցներով: Ու անուրանալի ճշմարտութիւն է որ այս սերտ գործակցութեամբ, յաղթական իրագործումներով մեր զոյգ կազմակերպութիւնները նախախնամական բարիք մը եղան մեր ժողովուրդին համար: Զիրար լրացնող, զիրար ամբողջացնող երկու ճակատակից կազմակերպութիւններ. մէկուն տկարութիւնը եղաւ միւսինը եւ նոյնը՝ փոխադարձաբար: Ու այս գաղափարական աշխարհայեացքին մէջ անկասկած Բարունակ Թովմասեանին դերը եղաւ անսահման օրինութիւն մը:

Պարոն Ալեք Մանուկեան իր նամակներէն մէկուն մէջ այսպէս կը բնորոշէ մեր ղեկավար ընկերը. «Միջին Արեւելքի հաշկական կեանքը բարերար դրոշմը կը կրէ Փրոֆ. Բարունակ Թովմասեանի անձին ու ազգանուէր մտածումներուն: Մեծ Եղեռնէն ետք, երբ հայութիւնը այդ աշխարհամասին մէջ կը ձեռնարկէր իր վերականգնումի լայնածաւալ գործունէութեան, պէտք ունէր խոհեմ այլ խիզախ առաջնորդութեան, հսկայական զոհողութեանց եւ անսահման կորովի: Թովմասեան հանդիսացաւ այն ազգայիններէն որոնք անսակարկ կերպով մատուցին այս բոլորը իրենց ժողովուրդին»:

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՄՔԸ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Անդամակցած է Կիլիկեան Աթոռի թեմերու Ազգային Ընդհանուր Ժողովներու, ինչպէս նաեւ՝ 1944-էն մինչեւ 1954, տասը տարիներ Ազգային Կեդրոնական Վարչութեան: Ունեցած է ջերմ յարաբերութիւն մանաւանդ երջանկալիշատակ Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսին հետ: 1945-ին երբ կ'ամուսնանար Պաղեստինի մեծահամբաւ Թադէոսեան ընտանիքէն՝ Անժէլին հետ, միջնորդութեամբը՝ Երուսաղէմի միաբաններէն Եղիշէ սրբազանի (հետագային՝ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան), պսակի արարողութեան ներկայ կը գտնուէր Ինքը՝ Վեհափառ հայրապետը, ինչ որ առանձնաշնորհեալ պարգեւ մըն է նորապսակ զոյգի մը համար եւ հազուադէպ պարագայ մը՝ կաթողիկոսի մը համար:

Սակայն անոր եկեղեցական ծառայութիւնը չպարփակուեցաւ միայն Անթիլիասով, եկեղեցական տաճնապէն ետք, 1957-ին, ան դարձաւ Մայր Աթոռի պաշտպանութեան համար պաշարող գլխաւոր դէմքը: Որքան ալ Սոյո Աթոռը պատմականօրէն մեզի՝ կիլիկեցիներու համար արժանի է ամէն յարգանքի, սակայն Ս. Էջմիածինը կը մնայ դարձեալ սրբութիւն

սրբոց: Եկեղեցական դէպքերուն եկան աւելնալ միջկուսակցական եղբայրասպան տխուր դէպքեր, ուր շատերու կարգին ինք եւս՝ Թովմասեան վիրաւորուեցաւ հակառակ ճակատի պատկանող փողոցային շարքայիններու կողմէ. քաջագործութիւն մը կատարած ըլլալու սնապարծութեամբ այդ տղաքը պաշտպանուեցան իրենց «շէֆ»երուն գուրգուրանքին ներքոյ:

Հակառակ իրեն դէմ եղած մատնութիւններուն, սպառնալիքներուն եւ հալածանքներուն՝ անշեղօրէն եւ աննահանջ կերպով ան շարունակեց իր համոզումը պահել յանուն հայրենասիրական սկզբունքներուն, արիաբար միշտ կենալով կողքին Մայր Հայրենիքին եւ Ս. Էջմիածնին, համոզուած ըլլալով թէ անոնք կը մնան միա՛կ երաշխիքը գաղթահայութեան գոյատեւման:



ԹՄՍ Հիմնադիրներու Մարմինը

Բազմաթիւ առիթներով եղաւ Վազգէն Առաջին վեհափառին հետ: Ալեկոծող սփիւքքին մէջ, Ամենայն հայոց Հայրապետը Բարունակ Թովմասեանը ունեցաւ որպէս հաւատարիմ եւ մտերիմ խորհրդատու: Վեհափառը չէր սխալած իր ընտրութեան մէջ: Ու ասանդութիւն մը սիրալիր յարաբերութիւններու, որ մինչեւ օրս կը շարունակուի Մայր Աթոռի եւ ՌԱԿ-ի միջեւ: Վստահաբար, այսուհետեւ եւս այդ բարի յարաբերութիւնները պիտի շարունակուին, մինչեւ այն ատեն որ տակաւին չէ լուծուած մեր եկեղեցւոյ միութեան հարցը, մինչեւ այն ատեն որ տակաւին պառակտուած կը պահուին թեմական մեր կառույցները:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ի գնահատելով փրոֆ. Բարունակ Թովմասեանի ազգային եկեղեցական ու հասարակական արդիւնաշատ գործունէութիւնը եւ Մայր Աթոռի նկատմամբ ցուցաբերած համակուիրումը իրեն կը շնորհէ Ս. Գրիգոր Լուսաւորչի շքանշանը՝ հայրապետական յատուկ կոնդակով, 1982-ին: Կոնդակին մէջ կը կարդանք ի միջի այլ զնախատական խօսքերուն. «Սրտանց կ'ողջունենք մանաւանդ ձեր հայրենաճուղի մշտաբար ոգին որ կը բնորոշէ ձեր անձնաւորութիւնը, հանդիսանալով գաղափարական մղիչ ուժը տարիներու ձեր տքնութեան ու աննահանջ աշխատանքին»:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԷՆ՝ ԹԷՔԷԵԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

1930-ական թուականներէն արդէն առաջարկ կը ներկայանար կողքին կազմելու մշակութային կազմակերպութիւն մը, թէեւ անկախ իր կառույցով, սակայն համախորհ ուսման վարակաւ սկզբունքներուն:

1946-ին, Լիբանանի ներքին գործոց նախարարութեան վաւերացումով արտօնութիւն ստացուեցաւ կազմելու ԹՄՄ-ը իր առանձին ծրագիր-կանոնագրով:

Հիմնադիրներու Մարմինը նոյն տարուան Յունուարին ունեցաւ իր կազմը՝ այսպէս. Մեթր Հրաչեայ Սեդրակեան (ատենապետ), Յակոբ Դաւիթեան (ատենադպիր), Համբարձում Պէրպէրեան (գանձապահ), անդամներ՝ Փրոֆ. Բարունակ Թովմասեան, Պարգեւ Պարսումեան, Տոքթ. Ժողէֆ Եղկաթեան եւ Գերսամ Ահարոնեան: Բայց կարճ ժամանակ ետք ընկեր Բ. Թովմասեան եկաւ ատենապետութեան պաշտօնին եւ երկար ատեն Հիմնադիրներու կազմին մաս կազմեցին նաեւ Գասպար Մենակ, Հայկաշէն Ուզունեան եւ Զաւէն Կոստանեան:

Բարիք մը եղաւ այս Միութիւնը, որ իր մասնաճիւղերը ունեցաւ գրեթէ ամէն կազմաւորուած համայնքէ ներս: Անոր ընկերային, գրական ու մշակութային տարածուն աշխատանքին շնորհիւ հարիւրաւոր երիտասարդներ միացան մեր շարքերուն:

Թէքէեանը դարձաւ իսկական ոսկի կամուրջը Հայաստանը սփիւքքին

Մեծ Երասխ Եամբունե Մշտեռները

ՓՐՈՖ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՆԵԱՆ

(Ծարունակում 8-րդ էջին)

կապող: Հայրենի գրողներ, արուեստագետներ, գիտնականներ եկան սփիւռք ու ծանօթացան գաղթահայութեան: Հայ բեմի տխակը՝ Գոհար Գասպարեան, Բանաստեղծութեան կոունկը՝ Սիլվա Կապուտիկեան, Երգի Պարի Պետական Ակադեմական անսամպլը ղեկավարութեամբ՝ Թաթուլ Ալթունեանի, Սունդուկեան Ակադեմական թատրոնը առաջնորդութեամբ՝ Վարդան Աճեմեանի եւ բազում այլ խումբեր ու արուեստագետներ եկան եւ լեցուցին մեր սրահները, արցունքոտ աչքերով ու հայրենակարօտ մեր ժողովուրդը աւելի հայացած ու Հայաստանը աւելի սիրած երդում ըրաւ մնալու հայ ու ապրելու հայօրէն: Մշակութային նոր խումբեր ծնան ամէն տեղ, ամէն քաղաքի մէջ: Երիտասարդներ Հայաստանի օրինակով սիրեցին հայ երգը, պարը, թատրոնն ու գրականութիւնը:

Հիմնադրութենէն տասնամեակ մը ետք՝ 1956-ին կը հիմնէ Միութեան «Ծիրակ» արուեստի եւ մշակոյթի ամսագիրը խմբագրութեամբ՝ ընկեր Զարեհ Մելքոնեանի: Թովմասեան նաեւ եղած էր հիմնադիրներէն «Անի» գրական պարբերականին, որուն խմբագիրն էր Վահէ-Վահեան:

Բարունակ Թովմասեանի տեսլապաշտ ու տեսլական իր նախաձեռնութեան մաս կազմեց Թէքեանի հզօրացումը եւ տարածումը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ՝
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Արդէն Լիբանան դարձած էր Միջին Արեւելքի հայ կեանքին կեդրոնը: 1946-ի Հոկտեմբեր 23-էն Նոյեմբեր 2 տեւող, Գահիրէ սկսած ու 1947-ի Հոկտեմբեր 11-22-ի լրացուցիչ Ը. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը ճակատագրական եղաւ ՌԱԿ-ի համար զանազան պատճառներով: Նախ որդեգրուեցաւ «Հայրենիքին հետ եւ Հայրենիքին համար» կարգախօսը:

Կուսակցութեան կեդրոնը Գահիրէէն փոխադրուեցաւ Պէյրութ եւ ընտրուեցաւ Բարունակ Թովմասեան Կեդրոնական Վարչութեան ատենապետը: Ատենադպիր ընտրուեցաւ Գերսամ Ահարոնեան: Ան մնաց այդ պաշտօնին վրայ մինչեւ 1982 թուականը, ամբողջ 35 տարի:

Սկսաւ Հայրենադարձութեան շարժումը՝ ներգաղթը սփիւռքէն դէպի Հայաստան: Մօտ 100 հազար հայեր Սուրիայէն, Իրաքէն, Պաղեստինէն, Լիբանանէն, Յունաստանէն եւ Ֆրանսայէն ներգաղթեցին Սովետական Հայաստան: ՌԱԿ-ը կեդրոնական դեր ունեցաւ այս հսկայածաւալ աշխատանքին մէջ:

Անմիջապէս ետք արդէն սկսաւ Յուրտ Պատերազմը Արեւմտեան Եւրոպական երկիրներու ու Միացեալ ճահանգներու եւ Խորհրդային Միութեան միջեւ, որուն որպէս արդիւնք կազմուեցաւ ՆԱԹՕ-ն, ուր ներառուեցաւ Թուրքիան, որ մասնակից չէր եղած Երկրորդ Աշխարհամարտին: Յուրտ Պատերազմի հետեւանքով ալ պաշտօնապէս ՀՅԴ դիրքաւորուեցաւ Արեւմուտքի կողքին եւ որուն դժբախտ արդիւնքը եղաւ պառակտումը սփիւռքահայ կեանքին ու Կիլիկեան Աթոռին:

Մշտարթուն պահակը մնաց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն: Գրեթէ ամէն տարի Թովմասեան այցելեց Երեւան, ուր պետական մարդոց հետ միասին քննեց ազգային կեանքը յուզող բոլոր կարեւոր հարցերը: Երբեմն խիստ եղաւ անոնց նկատմամբ, որոնք կ'առաջնորդուէին համաշխարհային համայնավարութենէ թելադրուած ապագային խորհուրդներով, մոռնալով երբեմն հայկական մեր արժէքները: Ծատ նո՛րբ, դիւանագիտական իր բնածին տաղանդովն իսկ, փրո՛ֆ. Բարունակ Թովմասեան ունեցաւ բարի ազդեցութիւն այդ յարաբերութիւններուն վրայ: 50-ական թուականներէն սկսեալ, մեր երկրորդական վարժարաններէն աւարտած շրջանաւարտներուն պատեհութիւնը տրուեցաւ ուսանելու Խորհրդային Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մէջ: Անոնք վերադարձան իրենց գաղութները եւ ստանձնեցին ազգային թէ կուսակցական կարեւոր պաշտօններ: Եղան խմբագիրները մեր պաշտօնաթերթներուն եւ անոնցմէ շնորհալիներ՝ գրեցին կուսակցական ու գաղափարական կարեւոր գիրքեր:

Բ. Թովմասեան իր շուրջ կրցաւ հաւաքել առողջ մտածող, համալսարանաւարտ եւ իրենց ասպարէզներու մէջ յաջողած կուսակցականներ եւ որոնցմով կազմեց իր Կեդրոնական Վարչութիւնը, որ գրեթէ մինչեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, միակամ, կրցաւ տալ առաջնորդութիւն ՌԱԿ-ին:

Արագօրէն կրնանք արձանագրել կարգ մը շինարարական իրագործումներ իր ատենապետութեան շրջանին տեղի ունեցած:

Այսպէս՝

Պուրճ Համուտի մէջ ամէն ճիգ ի գործ դրուեցաւ գնելու հողատարածք մը եւ բարձրացնելու Վահան Թէքեան վարժարանը, առաւելաբար անսակարկ մասնակցութեամբը «Պալքար» ակումբի մեր ընկերներուն: Պէյրութի սրտին վրայ սեփականութիւնը դարձաւ Թէքեան ակումբի հողին ու ապա՝ բարձրացուեցաւ գեղատեսիլ եօթ յարկանի Թէքեան Կեդրոնին, ու այս անգամ ընդհանրապէս «Զարթօնք» ակումբի մեր ընկերներուն: Հալէպի եւ Դամասկոսի մէջ ունեցանք մեր կեդրոնները: Նմանապէս՝ Ամմանի մէջ, Եդիշէ Պատրիարքին կողմէ յատկացուած հողաշերտին վրայ բարձրացուցինք մեր ակումբը: Աթէնքի մէջ լոյս սկսաւ տեսնել «Նոր Աշխարհ» շաբաթաթերթը: Պոստոնէն հայաշատ Ուղթըրթաուն փոխադրելով մեր ակումբը տեղը եղանք «Պալքար» Հաստատութեան շէնքին: Ու դեռ Ֆրեզնոյէն Լոս Անճելըս փոխադրուեցաւ «Նոր Օր» եռօրեան իր նոր շէնքով: Ու այս ամէնը հակառակ Յուրտ Պատերազմին, քաղաքացիական պատերազմներու եւ մեր ղեկավարութեան հանդէպ եղած հալածանքներուն:

Լայնօրէն գործակցեցաւ պէյրութաբնակ մեր աւագ սերունդի ընկերներուն՝ Հմայեակ Գրանեանի, Յովհաննէս Սեքսեմեանի, Միքայէլ Նաթանեանի, Ներսէս Ծիրինեանի, Մկրտիչ Մսըրլեանի, Տոքթ. Տ. Պեգիրեանի, Յակոբ Թորոսեանի եւ Կարապետ Ապաճեանի հետ: Անոնցմով խանդավառ ընկեր Թովմասեան ձեռնարկեց հետագայի իր աշխատանքներու ծրագիրը:

Կուսակցութեան ակումբներու թիւը աշխարհով մէկ քառապատկուեցաւ: Գանատայի մէջ արձանագրուեցան մեծ յաջողութիւններ, շնորհիւ ազգային ղեկավար դոկտ. Արշալիր Կէօնճեանի, որ եղակ բարիք մը զանատառայ գաղութին ունենալով լայն եւ սիրաիր գործակցութիւն: Հարիւրաւոր երիտա-

սարդներ եկան միացան մեր շարքերը: Գոնէ Լիբանանի մէջ կազմուեցան «Մկրտիչ Փորթուգալեան» համալսարանական երիտասարդաց ակումբը, «Շուշանիկ» տիկնանց ակումբը, Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն՝ «Արմենակ Եկարեան» մարտական ակումբը, որ փրկարար դեր ունեցաւ ապահովելու մեր ղեկավարներուն եւ հայաբնակ թաղերու ժողովուրդին ֆիզիքական ապահովութիւնը: Երեւանի մէջ հիմը դրուեցաւ սփիւռքահայ համալսարանական մեր ուսանողութեան «Արշակ Զօպանեան» ակումբին, եւ որուն վրայ հետագային հիմնուեցաւ Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Զարկ տրուեցաւ կուսակցական գրականութեան հրատարակութեան:



ՌԱԿի եւ ԹՄՄի Ամերիկայի ղեկավարներուն հետ Պոստոն
«Պալքար»ի շէնքին առջեւ

Հակառակ լիբանանեան պետութեան օրուան իշխանութիւններուն ոչ բարեացակամ քաղաքականութեան, մի՛շտ ալ որպէս քաղաքական ոյժ ՌԱԿը մասնակցեցաւ երեսփոխանական ընտրութիւններուն ներկայացնելով իր թեկնածուները՝ Հրաչեայ Շամլեան եւ Մկրտիչ Մսըրլեան: Կրցաւ քաղաքականօրէն սիրաշահիլ Լիբանանի միւս հատուածին եւ ընդհանրապէս մահմետական ղեկավարներու բարեկամութիւնը, երաշխաւորելով մեր ժողովուրդին ապահովութիւնը, ազգակործան եւ արկածախնդիր քաղաքականութեան զոհը չդարձնելու համար բովանդակ լիբանանահայութիւնը:

Իր յանախակի այցելութիւնները զանազան մեր շրջանակներուն եւ յատկապէս Միացեալ Նահանգներ եղաւ օգտակար, պահելու կապը կեդրոնին ու շրջանակներուն միջեւ: Ամերիկահայ մեր ընկերները, վստահելով իր անձին, մեծագումար նուիրատուութիւններով մասնակցեցան Վահան Թէքեան վարժարանի նախ հողի գնման ապա կառուցման ծրագրին: Նոյնը՝ Թէքեան Կեդրոնին պարագային:

Ը. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն մինչեւ ԺԶ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, բարեբախտութիւնը ունեցաւ ՌԱԿ-ը հեռու մնալու ներկուսակցական լուրջ տագնապներէ: Մեր կուսակցութիւնը դարձաւ վստահելի եւ յարգելի քաղաքական կազմակերպութիւն մը իր լրջութեամբ, շրջահայեացութեամբ, կազմակերպուածութեամբ եւ հետեւողականութեամբ:

Ազգովին ընչեք Մեծ Եղեռնի 50-ամեակը, որմէ ետք երկու կուսակցութիւններու սառն յարաբերութիւնները, բարեբախտաբար սկսան մեղմանալ եւ ընթանալ աւելի ջերմ մթնոլորտի մէջ, որմէ առհասարակ օգտուեցան հայկական համայնքները ամէնուրեք: Հայ Դատին համար հրատարակութեան տուաւ լուրջ եւ մնալուն աշխատանքներ, որոնց մէջ անգուցական գործ պիտի մնայ անկասկած «Յուշամատեն Մեծ Եղեռնի» կոթողային գործը Գերսամ Ահարոնեանի խմբագրութեամբ:

Երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներով Հայ Դատին հետ կապաւած, կ'ունենայ հանդիպում Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Զալլալեան Կիլի հետ, Զուիցերիոյ մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն, երեք կուսակցութիւններու կողմէ որդեգրուած «դրական չէզոքութեան» քաղաքականութիւնը եղաւ օրինաբեր: Դժբախտաբար, լիբանանահայութեան երկու երրորդը՝ աւելի քան 200 հազար հայութիւն լքելով երկիրը հեռացաւ: Ընկնըւած էր ան արդէն ի տես այդ խունապային արտագաղթին: Յառաջացած տարիքը մէկ կողմէն եւ կարգ մը զանազան հիւանդութիւններ զինք եւս ստիպեցին հեռանալ Լիբանանէն եւ հաստատուիլ Պոստոնի Ուղթըրթաուն ասանը, իր քրոջ, Ֆլորա Կորյեանի մօտ:

Ըսենք նաեւ որ Թովմասեան 1960ական թուականներէն սկսեալ իր աներձագին հետ ունէր առեւտրական իր հաստատութիւնը՝ «Թաղէոսեան-Թովմասեան Ընկերութիւն»ը զբաղելով եւրոպական երկիրներէ ներածումներու գործառնութեամբ:

Ապրիլ 18, 1982-ին, Լիբանանի Պի Եւ Սի «Ըրվիկն Հօլ» սրահին մէջ նշուեցաւ ընկեր Բարունակ Թովմասեանի կրթական, ազգային ու հասարակական գործունէութեան յիսնամեայ գործունէութեան յրելեանը, պատուոյ նախագահութեամբ՝ Եդիշէ Պատրիարք Տէրութեանի եւ նախագահութեամբ Պրն. Ալեք Մանուկեանի: Այս առթիւ ելոյթներ եւ սրտի խօսքեր արտասանեցին ընկերներ Տոքթ. Յ. Եոզկաթեան՝ ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետը, Անդրանիկ Անդրէասեան՝ Լոս Անճելըսէն յատկապէս եկած, Վարդէս Պետրոսեան՝ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահը, Պր. Կարպիս Նազարեան՝ ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետը, Յովհաննէս Թապագեան՝ ԹՄՄ Լիբանանի վարչութեան ատենապետը եւ ինքը՝ յրելեարը: Ուրախ էր այդ օր վաստակաշատ մեր ընկերը:

Բ. Թովմասեանի յուշագրական էջերը «Հայրենական Օրագրութիւն 1957-1985» թիւով 17, լոյս տեսաւ 1994-ին, խմբագրութեամբ եւ ծանօթագրութեամբ Դոկտ. Վաչէ Ղազարեանի:

Ընկեր եւ ընկերուհի Բարունակ եւ Անժէլ Թովմասեաններ աւելի քան քառորդ միլիոն տոլարի նուիրատուութեամբ մասնակցեցան Երեւանի նուրակառոյց ԹՄՄ-ի կեդրոնի ծրագրին:

ԵՐԿԱԹԷ ԴԳԱՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Կը հրատարակենք մեր աշխատակիցի գեղարուեստական այս գրութիւնը, որ կ'արձագանգէ յատկապէս Միջին Արեւելքի ներկայ տագնապալի կացութեան, պատերազմներուն եւ ժողովուրդներու կրած տառապանքին:

Զենքերու աստուածն էի: Ունէի սրբավայրս, ուր հզօր կիներ ու տղա-մարդիկ կու գային՝ որ օրհնեմ իրենց զենքերը: Այդ տարի, հանդիպեցան մեծ թիւով արինկզակ արազակներ, փոքր թիւ մըն ալ՝ սկսնակ յեղափոխականներ: Սակայն անակնկալը ստեղծեց փոքրամարմին մանուկ մը, որ ներկայացաւ սրբավայր եւ քաղաքավարի խնդրեց օրհնել իր ապուրի դգալը...

Յոլով տարիներ անդարձ սահած են այն օրէն, երբ վերջին ուխտաւորը ոտք դրաւ նուիրական մեհեանս: Յոլով՝ հայերու գրաբառով կը նշանակէ «շատ, բազմաթիւ»:

Ինչպէս կ'ըսէ հիմնաւորը առածը՝ «գօրատր սայրը չի կրնար կոփուիլ մոմիկի մը նուաղ բոցով»: (Սայր բառը եւս յայտնի դարձաւ ինծի Անդրանիկ վրդ. Կռանեանի «Բառգիրք հայերէն լեզուի» բառարանէն / Պէյրութ, 1998, էջ 405/, որ նախասիրած գիրքս է վերջին օրերուն): No.1 աստուծոյ հետեւորդներու վերջնական պարտութենէն եւ մահկանացուներու թագաւորութիւններու քայքայումէն ետք, պարտադիր անդորրութեան երկարամեայ տարիներուն, ակնառու ռազմիկներ այլեւս չծնան: Մարդկութիւնը նուաղած էր ի մեղկութիւն:



Խաղաղութեան առաջին շրջանին, քիչ թէ շատ պատերազմիկներ դեռ կը փութային տաճարս, որպէսզի իրենց թուրերը օծէի աստուածային գօրութեամբս: Ափսո՛ւ՝ անոնցմէ ոչ ոք յաջողեցաւ պատուով անցնիլ սահմանած փորձութիւնները: Նոր դարաշրջանի ռազմիկը կը կռուի լոկ ազահութեան եւ ջնջին վրէժխնդրութիւններու համար: Օրին, գրած էի. «Ահաւասիկ նոր ժամանակներու զինուորները. անոնց սիրտերը դատարկ են, իսկ նպատակները՝ ստոր: Ո՞ր մնացին անոնք, որոնց կամքը կը շիկանար սալիս վրայ ու կը դառնար անխոցելի պողպատ: Մարդկային կամքը, որ աղամանդեայ ամրութիւն մը ունէր, այժմ վերածուած է փոշիի»:

Ապա, օր մը, յանկարծակիօրէն, մանուկ մը յայտնուեցաւ մեհեանիս սեմին: Փոքրիկ արարած մը, որ իր հասակով մեհեանին մէջտեղը կանգնած սալէն աւելի բարձր չէր: Իր թմբիկ ու պզտիկ փետրուն մէջ պիճո՞ղ բռնած էր ապուրի մետաղեայ դգալ մը:

Ինչպէ՞ս նման մատաղ երեխայ մը կրցած էր հասնիլ այս բարձունքին: Միայն անոնք, որոնք ունին գօրատր կամքի ուժ՝ միայն անոնք կրցած էին ոտք դնել յարկիս տակ: Այս մանուկին յանդգնութիւնը ապշեցուց:

- «Կ'աղաչեմ, Տէ՛ր իմ, օրհնեցէ՛ք դգալս», խնդրեց մանուկը: Չէիր կրնար չտեսնել անմեղութեան փայլը աչքերուն մէջ:

Թէպէտ տատամսեցայ պատասխանելու, սակայն չէի կրնար անտեսել փաստը. մանուկը արդէն իսկ նուաճած էր մեհեան բերող դժուարին ուղին եւ իւրաքանչիւր այցելուի պէս իրաւունք ունէր անցնելու կանոնագրով հաստատուած քննութիւնները:

- «Յայտնէ՛ ինծի, որդեա՛կ, որո՞նք են այն թշնամիները, որոնց կը փափաքիս յաղթել այս գործիքով» (սա քննութեան առաջին հարցումը եղած է միշտ) :

- «Թըշ-նա-միճե՞րը...», կակազեց մանուկը՝ զարմացած հայեացքով:

- «...Այո՛, թշնամիները», կրկնեցի ես յաւելեալ լրջութեամբ:

Տղան նայեցաւ ինծի պարզունակ հայեացքով մը, ուր կար ո՛չ նեղութիւն եւ ո՛չ ալ ոխ: Ես հոգոց մը հանեցի եւ վերածեակերպեցի հարցումս. «Որո՞ւն դէմ կ'ուզես մարտնչիլ, զաւա՛կս»:

- «Ես... ես կ'ուզեմ յաղթել անօթութեան, Տէ՛ր իմ», արտասանեց ան հաստատական:

Չէի կրնար հաւատալ սկանջներուս: «Անօթութեա՞ն», հարցուցի ես, եւ այդ բառը մեհեանիս կամարներուն տակ հնչեց որպէս ամենաճադրական բրբիջ:

- «Այո՛, հայրիկս ըսաւ, որ սովը պիտի սպաննէ մեզ բոլորս: Ես կ'ուզեմ յաղթել սովին», ըսաւ տղան արագ-արագ:

Շտապ հայեացք մը նետեցի տղուն գիւղին վրայ, որ հեռուն՝ հորիզոնին, աղբատիկ կը թուէր: Խաղաղութիւնը հասած էր մահկանացուներու աշխարհի, սակայն բարգաւաճումը դեռ չէր յաջողած իր օրհնութիւնը բերել անոնց: Սովը՝ այդ անտեսանելի ու դաժան թշնամին, պաշարած էր զանոնք:

- «Երկրորդ հարցս. որո՞ւ համար կը մարտնչիս», հարցուցի:

Տղան սկսաւ թուել իր սիրելիները, եւ անոր խօսքը վերածուեցաւ ռիթմիկ աղօթքի. յիշեց զմայրիկն ու հայրիկը, յիշեց զքոյրիկը փոքրիկ, որ երկու տա-

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՏԵԱՆ

րեկան է լոկ, յիշեց զմեծ հայրիկը պատուական, յիշեց գՊարգելը՝ իր ընկերը հաւատարիմ, յիշեց գօրիորդ Լուսինէն, որ կը սորվեցնէ գիր ու հաշիւ, եւ ապա յիշեց զՆուէրը, զՎարդգէսը եւ զՆայիրան...

Լուռ սպասեցի մինչեւ որ մանուկը աւարտեց շարել իր սիրելիներուն անունները՝ քանի մը տասնեակ:

- «...Այսքա՞նն են բոլորը», հարցուցի ես, հագիւ զսպելով խնդուքս:

- «Ըրը... փտահ չեմ, Տէ՛ր իմ. կարելի՞ է ուրիշ մարդիկ ալ աւելցնեմ աւելի ուշ», հարցուց ան՝ ամօթխած:

«Անիմաստ է սիրաշահիլ զիս այսպիսի քաղցրութեամբ», խորհեցայ, բայց տեսնելով անոր անկեղծութիւնը՝ սիրտս փափկեցաւ: «...Թոյլատրելի է», պատասխանեցի:

- «Վերջին հարցիս մասին», ըսի իրեն, «կ'ուզեմ, որ շատ լաւ մտածես. յանուն յաղթանակի պատրա՞ստ ես մեռնելու»:

Տղան լուռ մնաց: Թերեւս չափազանց ծանր հարց մըն էր դեռահասի մը համար: Նայեցաւ ինծի քաջ դէմքով մը եւ խօսեցաւ անշեղօրէն:

- «Ո՛չ: Ես կ'ուզեմ ապրիլ մինչեւ որ մեծ հայրիկէս աւելի ծերանամ: Մայրիկս ու հայրիկս յոյժ պիտի տխրին, եթէ ես մեռնիմ: Խոստում կու տամ, որ շատ-շատ պիտի չարչարուիմ յաղթելու համար, բայց չեմ ուզեր մեռնիլ»:

Ես լռեցի, զի իմաստութիւնը յայտնուեցաւ մանուկին բերնէն: Տեսած եմ բազում տաքարիւն երիտասարդներ, որոնք պատրաստ էին մեռնելու յանուն փառքի, նոյնիսկ չըմբռնելով, թէ որքան թանկագին է կեանքին շունչը: Որպէս մէկը, որ նախքան աստուածանալը մահկանացու էր, կը յիշեմ կեանքին քաղցրութիւնը:

Այն ալ ըսեմ, որ ինծի գործընկեր աստուածները զիս կ'անուանեն «Հա-կասականը», զի կը մերժեմ սպանող յանուն սպանդի: Այս մակդիրը նաեւ տարածուած է մեր նեղ շրջանակէն դուրս, առիթ տալով բազմաթիւ մեկնաբանութիւններու, նոյնիսկ՝ թերահաւատութեան: Ես կը փափաքիմ, որ իմ օրհնած զենքերը ըլլան աւելին, քան կործանման գործիքներ: Կեանքը սրբազան է, եւ այս համոզումը աստուածութեանս հիմնաքարն է:

- «...Ըրը, Տէ՛ր իմ, ձախողեցա՞յ քննութիւնը», երկչոտութեամբ հարցուց տղան:

Ժպտեցայ իրեն. «Դուն փառատրապէս անցար փորձութիւնը, տղա՛ս»:

«Կը զգուշացնեմ քեզ՝ սա առաջին անգամն է, որ դգալ մը կը վերածնենմ զենքի»:

Վերցուցի մետաղեայ այդ փոքրիկ գործիքը: Բարեբախտաբար, ամբողջ դար մը զենք չէի օժած, եւ աստուածային գօրութիւնը վարարած էր մէջս: Հաւաքեցի այդ ուժը եւ դանդաղօրէն պարուրեցի շերեփին անհարթ մակերեսը անորմով: Հուրին շաչիւնը լսելի դարձաւ, եւ երկաթը սկսաւ շողշողալ անդրաբեզակնային լոյսով:

Ապա հասաւ ամենադժուար պահը՝ դգալին իշխանութիւն շնորհելը: Այդ գօրութեամբ է, որ զենքը կրնայ հակառակիլ բնութեան օրէնքներուն: Յաւուր պատշաճի, ես զենքերուն տուած էի իշխանութիւն՝ կտրելու մտային պղծութիւնն ու իրերու կառավարումը՝ առանց մարմինը վիրատրելու: Այժմ, այդ նոյն սկզբունքով, օրհնեցի. «Կը շնորհեմ տոկունութիւն. պիտի դառնաս անբեկանելի, դիմանալով ժամանակի հարուածներուն: Ուժդ պիտի աճի ու զարգանայ տիրոջդ հետ մէկտեղ, յարմարելով անոր հասակին ու կարիքներուն: Եղիր իմաստուն գօրութիւն մը, որպէսզի հսկես այս տղուն եւ անոր հարազատներուն վրայ՝ վանելով անոնցմէ ամենայն չարիք»:

Ինչպէ՞ս յաղթել անօթութեան: Բաւարար չէ միայն ստամոքսը լեցնելը: Մտաբերեցի հեռու յիշողութիւններս եւ յղեցի զանոնք՝ ձուլուելու տղուն միտքին հետ. վառարանին ջերմութիւնը, եփող ապուրին ախորժապեր բոյրը, սիրելիներով շրջապատուած ըլլալու ապահովութիւնը...այդ է յաղթանակը՝ տան սփոփիչ ու զրկող շունչը, հացը կիսուելու զգացումը, որ կը հոսի մարմինին ու հոգիին մէջ:

Ահաւասիկ այս դգալը, որ երբ խառնէ՝ կը ստեղծէ: Ան պիտի սահի կաթսաներու ներքին երեսին վրայ ու եթէ պէտք է՝ ճնշելով, պիտի քերէ ու սեղանին դէմ այնտեղ մնացած սնունդի ամենավերջին պատառը: Մնունդը, որուն ան կը դիպչի, պիտի պարզէ՛ւ մխիթարութիւն եւ գօրութիւն ուտողներուն, նոյնիսկ երբ կաթսան դատարկուած է ու կրակը՝ մարած:

Այս է սովին դէմ պայքարող զենքին իսկական կերպը: Երբ այս պատկերացումը ամրացաւ ոգեւտեսութեանս մէջ, ձեռքիս մէջ դգալը յանկարծ բռնկեցաւ պայծառ լոյսով մը: Յանձնեցի զայն անձնուէր ռազմիկին, որ դանդաղօրէն ետ-ետ գնաց ու դէմքը պահած բազմիմն՝ դուրս եկաւ մեհեանէն: Գիտեմ, որ ըսաւ ինչ-որ բաներ, սակայն ես մտքով արդէն ուրիշ տեղ էի՝ շլսեցի:

Հիմա կը խորհիմ... զինագործութեան աստուծոյ պաշտօնս խոհարարական գործիքներու կամ երկրագործական սարքերու աստուծոյ կոչումին վերածելը ամենեւին գէշ գաղափար մը չէ: Յաջորդիւ պիտի փորձեմ ճաշարանի մը կամ ագարակի գործիքները, զի կեանքը պահպանելը աւելի վեհ է, քան զայն խլելը:

Պէյրութ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՔԻՄ

Շաբաթաթերթը

այսուհետեւ կարելի է կարդալ

www.baikarweekly.com

կայքէջով

Մեծ Երազի Երազները

ՓՐՈՖ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆ

(Ծառնակում 9-րդ էջին)

Ի տարբերություն ՌԱԿ-ի անցեալի ղեկավարներուն եւ Կեդրոնական Վարչութեան զինք նախորդող ատենապետներուն, Բարունակ Թովմասեան երիտասարդ տարիքին կը միանար ՌԱԿ-ի շարքերուն: Նախորդները ՌԱԿ-ը բաղկացնող միւս կուսակցութիւններու անդամներ էին եւ իրենց քաղաքական կազմաւորումը ստացած էին այդ շարքերուն մէջ: Փաստօրէն ՌԱԿ-ի կազմաւորման աշխատանքներուն ան բացարձակօրէն ՌԱԿ-ի գաղափարախօսութենէն առաջնորդուեցաւ իր շուրջ հաւաքելով իրեն նման սփիւռքեան պայմաններու տակ հասակ առած՝ ա՛յն սերունդով, որոնք իրենց քաղաքական հետաքրքրութիւնները մեր կուսակցութեան մէջ դրսեւորած էին:

ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԵՐ

Հետեւողական նամակագրութիւն կը պահէր Թովմասեան բոլորին հետ՝ մեծ ու փոքր: Ունիմ թղթածրար մը լեցուն իր հետ ունեցած նամակագրութենէն: Պոստոն նշանակուած էի ԹՄՄ Կեդրոնական Վարչութեան վարիչ քարտուղարութեան պաշտօնին եւ ան յաճախ ընկերուի Անժէլին հետ այցի կու գար ամառները քրոջ՝ ընկերուի Ֆլորային, որ գանձապահն էր ԹՄՄ Կեդրոնական Վարչութեան: Կը խրախուսէր զիս, կը



Նազար եւ Լեւոն Նազարեաններու հետ Նիւ Ճըրզի

քաջալերէր հաստատ մնալու պաշտօնիս վրայ: Որքան ալ փշոտ ըլլար ճանապարհը, սակայն նոր ուժեր հասնելու էին փոխարինելու հիները: Գրեթէ ամէն օր կ'այցելէր «Պաշար» հաստատութիւն: Սովորութիւն ըրած էր, ինչպէս Պէրլուփի մէջ երբ ան կ'այցելէր «Զարթօնք»:

Նիւ Ճըրզի տեղափոխուելէս ետք, ան դարձեալ կու գար այցելութեան մեզի: Մեր տան մօտ կը մնային պանդոկ մը, սակայն օրուան ընթացքին կ'ըլլայինք միասին: Զինք կ'առաջնորդէի ազգային մեր հաստատութիւնները եւ ան կ'ունենար երկար գրուցներ եկեղեցական թէ աշխարհական առաջնորդներու հետ:

Իր ներկայութենէն օգտուելով կազմակերպեցինք ընդունելութիւն մը Քըրնիի մեր ընդարձակ տան մէջ: Ներկայ էր նաեւ «Ազգ»ի խմբագիրը՝ Յակոբ Աւետիքեան: Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի ընկերները մեծաւ մասամբ ներկայ էին: Հարիւրի մօտ հաւատարմներ եւ բարեկամներ: Ուխտը առինք հինգ նորագիրներու, որոնց մէջ էր կինս՝ Արփին: Կու տար հայրական իր խօսքը եւ մերթ ընդ մերթ իր հիւմորով ալ կը շաղախէր ան իր ըսածները: Իր ներկայութեան մակարդակ մը վեր կը բարձրանայինք եւ ազգային հորիզոնը տարբեր կը տեսնէինք:

Տարի մըն էր որ ստանձնած էի Պոստոնի ԹՄՄ-ի վարիչ քարտուղարութեան պաշտօնս. 1977 Օգոստոս 12 թուակիր նամակով կը գրէր ինծի. «Առ հասարակ ժլատ եմ իմ գնահատութեան մէջ: Ժլատ Ռամկավար Ազատական կուսակցական իրական հաւատարմ, նուիրեալ ու անշահախնդիր աշխատողներուն հանդէպ, որովհետեւ կը հաւատամ թէ գնահատութիւնը կրնայ քաջալերական ըլլալ անոնց համար, բայց կը վախճամ որ իրաւ գործիչները, անանձնական ու զոհողութեան ոգիով առաջնորդող ղեկավարները վարձատրութիւն նկատեն այդ գնահատանքը: Այդ պարագային բան մը պիտի պակսէր այն անխորտակելի իրաւ երջանկութենէն որ կու գայ հոգիին ու մտքի խորէն, ներաշխարհէն, մեր սքանչելի հայ ժողովուրդին ծառայած ըլլալու զգացումէն, մտորումներէն»:

Ուրախացաւ Նիւ Եորք փոխադրութենէս եւ անձնական գործի հետամուտ ըլլալուս: «Նիւ Եորքը ոչ միայն Ամերիկայի ազգային կեանքի բարախուն սիրտն է, այլեւ՝ աշխարհի: Դուռն հո՛ն աւելի լուրջ պիտի կարենաս ծառայել ե՛ւ ազգին եւ մե՛ր կուսակցութեան»:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ՌԱԿ ԺԶ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով. «Դուք դրօշակակիրը եղաք Հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման, ի խնդիր հայ գաղթաշխարհի կենսունակութեան, սատարելով մեր ժողովուրդի անբաժանելիութեան եւ միասնականութեան»:

Թորգոմ Արք. Մանուկեան. «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ ցոյց տուաւ անխախտ հաւատարմութիւն եւ Հայ Եկեղեցւոյ միասնականութեան նկատմամբ, դարաւոր աւանդութեանց պահպանում, եւ Ս. Էջմիածնի գերակայութեան մասին՝ անշեղ համոզում»:

Մերթ Հրաչեայ Սեդրակեան. «Դուք լիովին արժանի էք մեր ժողովուրդին լայն գնահատանքին»:

Հայկաշէն Ուզունեան. «Ու որպէս լծակ ազգային այս բոլոր հաստատութիւններու անվտանգութեան ու հայ հաւատքի, ըմբռնումներու տարածման, ՌԱԿ-ը օժտեցիք բարոյական անխախտ վարկով, դարձնելով զայն սփիւռքահայ կեանքի կեդրոնաձիգ ոյժը»:

Սերովբէ Արք. Մանուկեան. «Գնահատանքն է անսակարկ հայրենա-

սիրութեան, մեր ժողովուրդի հոգեւոր արժէքներու նուիրումին եւ մեր Եկեղեցւոյ պատմական դերին ու անոր նուիրապետական կարգերուն անաղարտ պահպանութեան. գաղափարներ՝ որոնց ոչ միայն ղեկավար եւ առաջնորդող դէմքը եղաւ, այլ նաեւ՝ անոնցմով ներշնչեց ամբողջ սերունդ մը»:

Տիգրան Թոսպաթ. «Ամէնուն տրուած չէ պատասխանատուութեան կոչում ունենալ եւ զայն պահել, ասպարէզ դարձնելու նուազագոյն հոգը չունենալով, որուն երբեք չէ ձգտած, բայց հետապնդած է զոյգ նպատակներ՝ ծառայել եւ ծառայել գիտնալ»:

Տորթ. Նուպար Պերպէրեան. «Ձեր այս բարեացակամ վերաբերումը մեր մամուլին հանդէպ, կը բխի անտարակոյս ձեր կուսակցական ազգային գիտակցութենէն ու մշտավառ նախանձախնդրութենէն, որոնք անհրաժեշտ ու անփոխարինելի ազդակները կազմելու են ճշմարիտ ղեկավարի մը»:

Տորթ. Ռոպէր Մէլէքեան. «Բոլոր եւ ուղեկիցներուդ ճիգերովը գոյացած հայաճապաստ երեւոյթները դարձած են մեր բոլորին վայելքն ու օրինակելի ներշնչումը»:

Նազար Նազարեան. «Մեծ հպարտութեամբ կը յիշեմ այն հին օրերը երբ մեզմէ հարիւրաւորներ որպէս ուսանողներ, կը սպասէինք ձեր դասերուն»:

Անդրանիկ Լ. Փոլատեան. «Հոն թիւ մը կը կազմեն այն երիտասարդները որոնք Փրոֆ. Թովմասեանի խորհուրդով եւ կարգադրութիւններով համալսարանական ուսում ստացան. անոնցմէ շատեր, դարձեալ իրենց մենտորին թելադրանքով, ազգային ծառայութեան մէջ մտան, ու ներկայիս պատասխանատու պաշտօններ կը վարեն հայ սփիւռքի ամէն կողմերը»:

Երուանդ Ազատեան. «Ու քանիներ քալած են այդ ճամբայէն, ձեզի հետ ու ձեր ետեւէն եւ այսօր խոր հիացումով կը յիշեն ձեր իմաստութիւնը, ձեր հայրենասիրութիւնը, ձեր հաւատքն ու սէրը հայութեան ապագային հանդէպ»:

Միսաթ Հայկեց. «Ձեր անձն ու գործը կը նոյնանան ՌԱԿեան վերջին կիսադարու ազգաշէն հրաշալի գործին եւ հայասնունդ պայծառ մտածողութեան հետ»:

ՄԱՀՆ ՈՒ ՅՈՒՂԱՐԿԱԻՐՈՒԹԻՒՆԸ

Փրոֆ. Բարունակ Թովմասեան մահկանացուն կնքեց Դեկտեմբեր 25, 1991-ին, Ուոթըրթաունի մէջ (Մենչուսեց, ԱՄՆ): Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ արժանավայել հանդիսութեամբ, տեղւոյն Ս. Յակոբ Հայց. Եկեղեցիին մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Խաժակ Եպս. Պարսամեանի, որ տպաւորիչ դամբանականով մը անդրադարձաւ անոր ազգային-եկեղեցական ծառայութեանց: Մարմինը ամփոփուեցաւ Ռիճլոն գերեզմանատունը:

ՀԲԸՄի կողմէ ներկայ գտնուեցան Նազարեան եղբայրները՝ Կարպիս, Նուպար եւ Նազար, ինչպէս նաեւ՝ դուստ. Բերկուրի Սվաճեան:

Հոգեճաշէն ետք, «Պաշար» շաբաթաթերթի խմբագիր Գրիգոր Քէօսէեան վարեց հակիրճ յայտագիր մը: Յաջորդաբար ելոյթներ ունեցան Տորթ. Յարութիւն Արզումանեան, Համբարձում Պերպէրեան, դուստ. Նուպար Պերպէրեան, դուստ. Վաշէ Ղազարեան եւ Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան: Ընդհանրապէս խօսք արտասանեց ողբացեալին աներձագը՝ Հայկ Թադէոսեան:

Նոյն օրն իսկ, երեկոյեան նոյն ինքնաշարժով յուղարկաւորութեան մասնակիցներս՝ իր անմիջական շուքին տակ յատկապէս Լիբանանի մէջ հասակ առած գաղափարակից ընկերներս Սարգիս Փաքալեան, Պետրոս Փիանտարեան, Վաշէ Ղազարեան, Սոնիկ Վաշէճեան վերադարձանք Նիւ Եորք: Յուզում կար: Ազգային կեանքէն կաղնի մըն էր որ կը փլէր: Ոչ մէկ խօսք այդ չորս ժամերուն ընթացքին: Բան չէր մնար ըսելիք այլեւս այդ պահուն:

Փրոֆ. Բարունակ Թովմասեան ՌԱԿ-ի պատմութեան էջերուն մէջ դրոշմուեցաւ Վահան Թէքէեանի, Արշակ Զօպանեանի, Միհրան Տաճատեանի, Արտակ Դարբինեանի, Հրաշ Երուանդի անուններու կողքին որպէս լուսամիտ դէմք մը եւ ազգային քաղաքական մեծ ու իսկական առաջնորդ մը:

Նիւ Ճըրզի

Tekeyan Cultural Association Greater New York
in collaboration with the Armenian Radio Hour
of New Jersey presents

**ROMANTIC SOUL:
MASTERPIECES FOR
PIANO TRIO**

Featuring works by
Khachaturian, Mendelssohn,
Naregatsi, Babajanian
and others

**TANYA
GABRIELIAN**
piano

**ANI
KALAYJIAN**
cello

**ERIC
SILBERGER**
violin

Sunday, September 27, 2026
4PM

West Side Presbyterian Church
6 S Monroe St, Ridgewood, NJ 07450

Tickets \$75, \$50, \$40

Փասսատինա-Կլենտեյլ

Պ Ա Տ Ի Ի Ա Ր Ժ Ա Ն Ա Ի Ո Ր Ա Ց

Հայրերու Օրուան Մեծարանքի Երեկոյ

Թեքեան Մշակութային Միութեան Փասսատինա-Կլենտեյլ Մասնաճիւղի նախաձեռնութեամբ, Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան, ԹՄՄ-ի Պէշ-կէօթիւրեան Կեդրոնը լեցուած էր հոծ բազմութեամբ՝ նշելու Հայրերու Օրը բացառիկ խորհրդանշական ձեռնարկով:

Երեկոն առանձնայատուկ էր թէ՛ իր գաղափարական բովանդակութեամբ եւ թէ՛ բծախնդիր կազմակերպութեամբ: Անիկա նուիրուած էր այն հայրերուն, որոնք տասնամեակներ շարունակ իրենց անձնուէր ծառայութիւնը բերած են միութենական, կուսակցական, կրթական եւ ազգային-հասարակական աս-պարէզներուն մէջ՝ դառնալով սերունդներու դաստիարակներ, ազգային արժէքներու հաւատարիմ պահապաններ եւ համայնքային կեանքի նուիրեալ մշակներ:

Անոնց նուիրումը, պատասխանատուութիւնն ու օրինակելի ծառայութիւնը տարիներ շարունակ նպաստած են ազգային ինքնութեան պահպանման, հայ մշակոյթի ծաղկման եւ համայնքային կառոյցներու ամրապնդման:



Ջերմ մթնոլորտի մէջ ընթացած երեկոն համախմբեց տարբեր սե-րունդներու ներկայացուցիչներ, ո-րոնք իրենց ներկայութեամբ եւ գնա-հատանքի խօսքերով արժեւորեցին հայրերու նուիրեալ ծառայութիւնը՝ վերահաստատելով, որ նման անձ-նատրութիւններու թողած ժառան-գութիւնը կը շարունակէ ներշնչել ու առաջնորդել նոր սերունդները: Ձեռ-նարկի բացման խօսքը արտասա-նեց Տիկ. Հնրիկ Արսլանեանը, որ ողջունեց ներկաները եւ մասնաճիւ-ղի վարչութեան անունով շնորհա-տրեց բոլոր հայրերն ու մեծ հայրե-րը մաղթելով անոնց առողջութիւն, ուժ եւ շարունակական նուիրում ընտանիքին ու համայնքին ծառա-յելու առաքելութեան մէջ:

Այնուհետեւ բեմ հրաւիրեց Թեքե-եան Մշակութային Միութեան Միաց-եալ Նահանգներու եւ Գանատայի Արեւմտեան Շրջանի Վարիչ Քարտուղարուհի Տիկ. Մայտա Քիւրէճեանը, որ ներկայացուց երեկոյեան յայտագիրը: Ան յայտնեց, թէ ձեռնարկին նպատակն է պատուել անցեալի այն նուիրեալ ղեկավարները, որոնց ծառայութիւնը մնա-յուն հետք ձգած է միութեան կեանքին մէջ, իսկ այսօր անոնց զաւակներն ու ընտանիքի անդամները կը շարունակեն նոյն առաքելութիւնը՝ իրենց ներդրու-մը բերելով թէ՛ միութենական եւ թէ՛ ազգային կառոյցներու աշխատանքնե-րուն: Յիշատակի արժանացան այն պարտաճանաչ միութենականները որոնց ընտանիքի անդամները ներկայ էին այդ հաւաքոյթին: Յատկապէս յիշուե-ցան Սկրտիչ Մարեան, Երուանդ Պապայեան, Յարութիւն Նազիրեան, Ճա-նիկ Միսիրեան, Զօհրապ Քէշիշեան, Մելքոն Յովսէփեան, Գրիգոր Քիւրէճե-ան, Կարապետ Յարութիւնեան, Խոսրոֆ Տապալաղեան, Էտնոն Սարգիս-եան, Գրիգոր Կանիմեան, Փայլակ Ահարոնեան, Արա Ահարոնեան, Ճորճ Մանտոսեան, Մելքոն Արսլանեան, Անդրանիկ Հայկեան, Տաճատ Գասապ-եան եւ Տոքթ. Միհրան Սիմոնեան:

Տիկ. Մայտա Քիւրէճեան իր խօսքին մէջ յակիրճ անդրադարձաւ անոնց կեանքին ու ծառայութեան: Յիշատակուած նուիրեալներու ընտանիքի ան-դամները խոր յուզումով եւ արդար հպարտութեամբ հետեւեցան յայտագրին՝ ապրելով գնահատանքի եւ երախտագիտութեան այդ խորհրդանշական պա-հերը:



Պաշտօնական յայտագրի աւարտին բեմ հրաւիրուեցան մեծարեալներու ընտանիքի անդամները՝ մասնակցելու մոմավառութեան խորհրդանշական արարողութեան: Յուզիչ այս պահուն, վառուած մոմերը խորհրդանշեցին յի-շատակը, երախտագիտութիւնն ու շարունակուող ժառանգութիւնը այն նուիր-եալ հայրերուն եւ ղեկավարներուն: Արարողութիւնը անցաւ հանդիսատար մթնոլորտի մէջ՝ ներկաներուն մղելով յարգանքի լուռ խոնարհումի:

Յայտագրի պաշտօնական բաժնի աւարտին ներկաները հրաւիրուեցան միասնական ընթրիքի, որ առիթ դարձաւ ջերմ գրոյցներու, յիշողութիւններու փոխանակման եւ բարեկամական մթնոլորտի ամրապնդման: Երեկոն շարու-նակուեցաւ հաճելի գեղարուեստական մթնոլորտի մէջ:

Վաստակատու սիրուած երգիչ Դաւիթ Սամուէլեան կատարեց Հայրերու օրուան նուիրուած երգ մը արժանանալով բոլորին գնահատանքին: Արուես-տագէտ ջութակահար Շանթ Դանիւլեան իր գեղեցիկ կատարումներով հնչե-

ցուց հայկական սիրուած մեղեդիներ: Անոր երաժշտութիւնը աւելի եւս խան-դավառեց ներկաները՝ հաղորդելով երեկոյին ազգային շունչ, ջերմութիւն եւ



տօնական տրամադրութիւն, որով արժանի աւարտ մը տրուեցաւ Հայրերու Օրուան նուիրուած այս յիշարժան ձեռնարկին:

Այս աննախադէպ ձեռնարկին նախաձեռնութիւնը մեծապէս գնահատան-քի արժանի է:

Թեքեան Մշակութային Միութեան Փասսատինա-Կլենտեյլ Մասնաճիւղի Վարչութիւնը բարձր մակարդակով եւ բծախնդիր կազմակերպութեամբ կեան-քի կոչեց Հայրերու Օրուան նուիրուած այս գեղեցիկ ձեռնարկը՝ արժեւորելով այն նուիրեալ հայրերու եւ ազգային-հասարակական մշակներու վաստակը,



որոնց ծառայութիւնը շարունակաբար կը ներշնչէ նոր սերունդները: Յատուկ գնահատանքի արժանի է նաեւ երեկոյի յայտագրի բովանդակալից եւ յուզիչ ներկայացումը, որ մեծ խնամքով եւ արժանավայել կերպով վարեց Տիկ. Մայ-տա Քիւրէճեանը՝ հանդիսութեան հաղորդելով պատմական յիշողութեան, երախտագիտութեան եւ ազգային արժէքներու պահպանման խորհուրդը:

Վարձքերնիդ կատար:

Թղթակից

Մեծապէս գնահատելով ԹՄՄի Փասսատինա Կլենտեյլ Մասնաճիւղի ազ-գանուէր գործունէութիւնը եւ յատկապէս Հայրերու Օրուան ձեռնարկը կ'ըլլան հետեւեալ նուիրատուութիւնները:

\$500.00 Արա եւ Սոնիա Պապայեաններ Անահիտ Քէշիշեան Անի Սարգիսեան Վահէ, Շահնուր, Վարանդ , Վիգէն եւ Շանթ Յովսէփեաններ Արա Գասապեան Յասմիկ Մանտոսեան Սարօ եւ Հիւտա Յարթունեան	Երուանդ Պապայեանի Յիշատակին Զօհրապ Քէշիշեանի Յիշատակին Էտնոն Սարգիսեանի Յիշատակին Մելքոն Յովսէփեանի Յիշատակին Տաճատ Գասապեանի Յիշատակին Ճորճ Մանտոսեանի Յիշատակին Կարապետ Յարութիւնեանի եւ Գրիգոր Քիւրէճեանի Յիշատակներուն
\$400.00 Շահէ եւ Արփի Կանիմեան	Փայլակ եւ Արա Ահարոնեաններու Յիշատակին
\$300.00 Լեւոն եւ Հնրիկ Քէշիշեան Դաւիթ Սամուէլեան	
\$100.00 Մի Ոմն	